Azg
armenian daily

Մայիս 7 Ուրբաթ 1993

ՌԱՍՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հատ. թիւ 85 (336)
գինը 10 ռ.
դասիչ 69149
Երեւան 375010
Հանրապետութեան 47
հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

ԼՍԵԼՈՒԹԵՍՆԵՐԻ ԵՎ ՄՍԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԼՍԵԼ-ԱԲՄ.ՀԿ

Մեկ

Մեծ Բրիտանիան աջակցում է Ադրբեջանին

Ինչպես հաղորդեց ՄԱԿ-ում Ադրբեջանի ներկայացուցիչությունը, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բիւրեղ 822 բանաձեւն ընդունելուց հետո, ապրիլի 30-ին կայքեր տեղի ունեցան իվնարկության շարժառիթներով: Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ, դեսպան Ռիչարդսոնն ասաց. «Լոնդոնը ելնում է այն բանից, որ Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի տարածքն է»: Մեծ Բրիտանիայի նման դիրքորոշումը համաղասախսան ձեւով ընդունվեց ՄԱԿ-ի շրջանակներում, հաղորդեց նույն աղբյուրը: Ռուսաստանի եւ Ֆրանսիայի ներկայացուցիչների ելույթներում տվյալ թեման չի շոշափվել: Իսկ ԱՄՆ-ի եւ Չինաստանի ներկայացուցիչներն ընդհանրապես ելույթ չեն ունեցել:

Սնարֆ

Ճակատ

Ռազմական տեղաշարժեր Քելբաջարո՞ւմ

Երեկ եւ նախորդ գիշեր իրադրությունը Լեռնային Ղարաբաղի ռազմաճակատներում էական փոփոխություններ չի կրել: Առանձին շրջաններում արձանագրվել են միայն կարճաժամ դիրքային փոխհրաձգություններ: Այս մասին Ստեփանակերտից հաղորդում է մեր թղթակից ՎԱՀՐԱՄ ՍՂԱՋԱՆՅԱՆԸ: Հակամարտ կողմերը ձեռնպահ են մնացել լայնածավալ ռազմական գործողություններից: Պատճառն այն է, որ ավելի վաղ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերին հրամայվել էր առաջինը կրակ չբացել: Ինչ վերաբերում է ադրբեջանական կազմավորումներին, առյուծ ռազմական մասնագետների կարծիքով, նրանց անշարժության հիմնական պատճառն անբարենպաստ եղանակն է:

Իրենց հերթին ադրբեջանական աղբյուրները հաղորդում են, թե իբր մայիսի 2-5-ը Հայաստանի Վարդենիսի շրջանի տարածքից Քելբաջարի եւ Մարտակերտի շրջաններ է տեղափոխվել մեծ քանակությամբ ռազմական տեխնիկա եւ կենդանի ուժ: Ըստ նույն հաղորդագրության, մայիսի 4-ին ադրբեջանական կազմավորումները շարունակում էին Շահումյանի շրջանի Գյուլիսան գյուղի մերձակա անտառների «մաքրումը»: Այս մասին հաղորդում է Սնարֆ գործակալությունը հենվելով ադրբեջանական Թուրան գործակալության վրա: Ադրբեջանական աղբյուրներ հաղորդում են նաեւ, թե վերջին օրերին Մարտակերտի շրջանի Կուսապաս գյուղից ուժգին հրետակոծության է ենթարկվել Մարտակերտ շրջկենտրոնը: Մանրամասնություններ չեն հաղորդվում:

«Ազգ»

Գնդակոծվել են Դովեղի դիրքերը

Երեկ առավոտյան Ադրբեջանի Ղազախի շրջանի տարածքից տանկերից եւ խոշոր տրամաչափի գնդացիրներից գնդակոծվել են Նոյեմբերյանի շրջանի Դովեղ գյուղի հայկական պաշտպանական դիրքերը: Այս մասին հաղորդել են Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական ծառայությունից: Ավելի վաղ՝ մայիսի 5-ին, Նախիջեւանի տարածքից գնդակոծվել են Արարատի շրջանի պաշտպանական դիրքերը: Հայկական կողմը դիմել է պատասխան համարժեք գործողությունների: Երկու դեպքում էլ հայկական կողմից տուժածներ չեն եղել:

Իրենց հերթին ադրբեջանական աղբյուրները հաղորդում են, թե վերջին մի քանի օրերի ընթացքում Հայաստանի տարածքից գնդակոծվել եւ հրետակոծվել են Ադրբեջանի Աղստաֆայի շրջանի Քյոհնա-Ղալաղ, Գեսաբեկի շրջանի Բաբեքեն եւ Նովոսարատովկա գյուղերը, ինչպես նաեւ Նախիջեւանի Սադարակի շրջանի տարածքը: Մանրամասնություններ չեն հաղորդվում:

Առանց մեկնաբանությունների հիշեցնենք միայն, որ «Գեսաբեկի շրջանի Բաբեքեն գյուղը» նույն Կրասնոսելսկի շրջանի Արծվաբեկն է: «Ազգ»

Ղարաբաղի Հարց

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԸ ՄԵՐԺԵՑԻՆ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Եռօրյա լռությունից հետո երեկ Հայաստանն անդրադարձավ ռուս-բուրգական-ամերիկյան նախաձեռնությանը: Հայաստանի արտգործնախարի առաջին տեղակալ Ժիրայր Լիդարիսյանը եւ ՀՀ նախագահի հատուկ լիազորությունների գծով արտակարգ եւ լիազոր դեսպան Դավիթ Շահնազարյանը հանդես եկան հայտարարությամբ:

Գնահատելով նախաձեռնությունը, Ժիրայր Լիդարիսյանը նշեց, թե դրա հիմնական նպատակն էր փորձել ընդհանուր հող գտնել բանակցությունների վերսկսման համար, ինչպես նաեւ լուծել Քելբաջարի կառուցակցությամբ ստեղծված բարդությունները: Արտգործնախարարի առաջին տեղակալը մի քանի դիտողություններ արեց ներկայացված փաստաթղթի վերաբերյալ: Առաջին, բանակցությունները ղեկավարվեն ԵԱՀԽ սահմաններում, իսկ դրանք փաստորեն դուրս են եկել ԵԱՀԽ շրջանակներից: Երկրորդը կազմված է խնդրի խորհրդաղահական նշանակության հետ եւ մամուլում ժամանակից շուտ այդ առաջարկների հրապարակումը դժվարացրեց դրանց քննությունը: Այնուհետեւ փաստաթղթում նշված որոշ տերմիններ անհասկանալի են եւ նույնպես դժվարացրին դրանց քննությունը: Եւ վերջապես, չորրորդ կարեւոր նկատառումը. բանակցություններին չեն մասնակցել ոչ Հայաստանը, ոչ Ղարաբաղը:

Պրն. Լիդարիսյանի ասելով, Հայաստանը դարձականություն է ստանձնում ռազմական գործողությունները դադարեցնել Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանների ողջ երկայնքով: Ժամկետը թողնվում է ինչպես Ադրբեջանի հայեցողությանը, այնպես էլ ներառվում է փաստաթղթի մեջ նշված թվականը:

Հայաստանն իր դիրքորոշումում հիմնավորված է համարում Ղարաբաղի դիրքորոշումը, թե Քելբաջարից ինքնաղաշտպանական ուժերի դուրսբերումը կկատարվի այն ժամանակ, երբ ժամանեն ԵԱՀԽ դիտորդները: Իսկ մինչ այդ Հայաստանը դադարաս է սկսել բանակցությունները հակամարտության բոլոր կողմերի մասնակցությամբ, ընդգրկելով ներկայացված բոլոր փաստաթղթերն ու նաեւ Ղարաբաղի առաջարկությունը: Հայաստանի եւ Ղարաբաղի դիրքորոշումները հանձնվել են Ռուսաստանի եւ ԱՄՆ դեսպանատներին:

Անդրադառնալով Ղարաբաղի դիրքորոշմանը, Դավիթ Շահնազարյանը հայտնեց, թե ԼՂՀ-ն նույնպես ողջունել է այդ նախաձեռնությունը որպես խաղաղարար, բայց անհամաձայնություն է հայտնել Քելբաջարից վերջին ժամկետով մայիսի 14-ին գինված ուժերի դուրսբերման հետ, նախքան ԵԱՀԽ դիտորդների ժամանումը եւ կայուն զինադադարի հաստատումը: Ղարաբաղի կարծիքով, զինադադարին ոչեմ է գնալ ավելի ուժեղ իրավական հիմք ունեցող փաստաթղթերով:

Այժմ Հայաստանն ակտիվ քայլեր է ձեռնարկել, որպեսզի վերսկսեն բանակցությունները: Հայաստանը փաստաթուղթը որպես վերջնագիր չի ընդունել: Փաստաթղթում նշված է եղել, թե դրական համաձայնության դեպքում ոչեմ է ստորագրել եւ ուղարկել: Սակայն թե Հայաստանը, թե Ղարաբաղը ուղարկել են միայն դիտողություններ ու ցանկություններ, դրանով իսկ արտահայտելով իրենց սկզբունքային վերաբերմունքը՝ բանակցությունների միջոցով լուծում տալ բոլոր կողմերին հուզող խնդիրներին:

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

Շրջանակ

Ռուսաստանի զորքերի մասնակցությունը բացառվում է

Ինչպես հայտնի է, Բոսնիայում է գտնվում ԵԱՀԽ շրջանակներում տեղի ունեցող բանակցություններում Ռուսաստանի արտգործնախարարության հատուկ ներկայացուցիչ Վլադիմիր Կազիմիրովը: Մայիսի 6-ին նա հանդիպում ունեցավ Ադրբեջանի արտգործնախարար Թոֆիկ Ղասիմովի հետ: Երկու կողմերը հրաժարվեցին մեկնաբանել հանդիպման ընթացքն ու բովանդակությունը:

Հանդիպումից հետո Ղասիմովը, դատասխանելով լրագրողներից մեկի այն հարցին, թե հնարավոր է Ռուսաստանի զինված ուժերի մասնակցությունը հակամարտության կարգավորմանը, հայտարարեց, որ Ադրբեջանը չի կարող համաձայնվել, որ ռուսաստանյան զորքերը «երկնագույն սաղավարտների» կարգավիճակով մասնակցեն հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորմանը: Նրա խոսքերով, դա հնարավորություն կտա Ռուսաստանին վերականգնել իր ռազմական ներկայությունն Ադրբեջանում, ինչը չի մտնում դաշնային Բաքվի ծրագրերի մեջ:

Սնարֆ

Բարիք

Ադրբեջանն ընդունեց ծրագիրը

Ադրբեջանը հավանություն տվեց ռուս-բուրգ-ամերիկյան եռակողմ ծրագրին, մայիսի 6-ին հայտարարեց դեսպան Ալի Քերիմովը: Նրա խոսքերով, եռակողմ ծրագիրը շատ բարդ հարցերնում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բիւրեղ 822 բանաձեւի հետ: Սակայն, ինչպես Թուրան գործակալությանն ասաց մի ադրբեջանցի դիվանագետ, դժվար է հավատալ, թե Հայաստանը կհամաձայնվի իրականացնել տվյալ համաձայնագիրը: Ավելի շատ, նա ամեն ինչ կանի ծրագիրը տորպեդահարելու համար:

Սնարֆ

Մամուլ

Բոսնիացի սերբերը չեն հանձնվում

Շուրջ 17-ժամյա նիստից հետո բոսնիացի սերբերի խորհրդարանը քվեների մեծամասնությամբ մայիսի 6-ին մերժեց Բոսնիայի ու Հերցեգովինայի խնդրի խաղաղ կարգավորման Վենս-Օուենի ծրագիրը եւ որոշեց այդ հարցի առթիվ վերջնական որոշման կայացումը մայիսի 15-16 կայանալիք հանրաքվեի ժամանակ թողնել բոսնիացի սերբերին:

Հարավսլավիայի նախագահ Սլոբոդան Միլոշեւիչը, որ Առուիլիյոյի դրեսս գործակալության հաղորդման, ասել է. «Բոսնիացի սերբերի խորհրդարանը ընդունեց վաղարագույն որոշումը: Դրանով դարտություն կրեց քաղաքական իմաստությունը: Երկիրը եւ ժողովուրդը բեւեռվում են մեծ անորոշության ժամանակաշրջան: Չգիտեմ, թե նրանց ինչ է սպասում, այդ երկրին ինչ կբերեն հաջող գիշերը եւ դեռեկը»:

Բոսնիացի սերբերի ղեկավար Կարաջիչը, որը փորձել էր խորհրդարանականներին համոզել ընդունելու հաշտության ծրագիրը, ասաց. «Միջազգային ընկերակցությունը մեզ շատ ծանր վիճակի մեջ է դրել, ուստի եւ այդ վճիռը հուսահատ բայլ է: Այդ դատճառով մենք որոշումը հանրաքվեի ժամանակ կներկայացնենք ժողովրդի քննարկմանը»:

Անդրադառնալով արտաքին ռազմական միջամտության սպառնալիքին, նա ասաց. «Երբ որեւէ մեկը հարձակվի մեզ վրա... կլինի քաոս»:

Հունաստանի վարչապետ Միցոտակիսը, որը նեկա էր Պատրանում կայացած խորհրդարանի նիստին, հայտարարեց. «Մեր ջանքերն ապարդյուն անցան: Վենս-Օուենի ծրագիրը մերժվեց, չնայած Բելգրադից մինչեւ եվրոպական համայնքի ղեկավարների առած կոչերին: Ցավոք, որոշումը մերժողական է»:

Իր հերթին ԱՄՆ դեսպարտուղար Քրիստոֆերը Բրյուսելում կայացող ՆԱՏՕ-ի երկրների ժողովին հայտարարեց, թե Բոսնիայի ներկա դայմաններում անհնարին հանրաքվեի միջոցին դիմելով սերբերը ձգտում են ժամանակ շահել: Նա կոչ արեց նրանց դեմ ուժային մեթոդներ կիրառել: Իսկ Ռուսաստանն իր բանագնացին երեկ ուղարկեց Բելգրադ, տեղի ղեկավարության հետ խորհրդակցելու: Ինչ վերաբերում է Լորդ Օուենին, վերջինս երեկ դեմ արտահայտվեց զինվորական միջամտությանը, շեշտը դնելով այլ դատժամիջոցների վրա:

Երեկ գիշեր ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն արտահերթ նիստ գումարեց, քննելու համար Ֆրանսիայի առաջարկած որոշման նախագիծը, որ նախատեսում է ՆԱՏՕ-ի հովանավորությամբ անվտանգության գոտիներ ստեղծել Բոսնիայում, ի դատասխանություն իսլամների:

«Ազգ»

Աշխարհ

Գերմանիայի տրանսպորտի նախարարը հրաժարվեց

Կանցլեր Քոլը լրագրողներին հայտարարեց, թե իր կաբինետի անդամներից տրանսպորտի նախարար Գյունտեր Կրուզեն հրաժարական է տվել, որպես հետեւանք իր դեմ կատարված մեղադրանքների: Նախարարը մամուլի կողմից քննադատվել էր դետական միջոցներից ոչ նպատակային հատկացումներ կատարելու համար. նա 4000 դոլար էր հատկացրել առողջապահական հասարակական մի կազմակերպության: Մյուս կողմից, մեքենաշինական մարզի աշխատողների գործադուլը, ինչպես նախատեսվել էր մեր նախորդ համարում, երեկ տարածվել է Սաքսոնիայում եւ Բրանդենբուրգում, ընդգրկելով ավելի քան 35 հազար բանվոր եւ ինժեներ:

Ֆրանսիան խստացնում է ներգաղթը

Ֆրանսիայի օրենսդիրները երեկ որոշեցին սահմանափակել եւ ավելի խիստ կանոնակարգել ներգաղթը եւ քաղաքացիություն ստանալու իրավունքը: Ֆրանսիացու հետ ամուսնության, դրսում ապրող օտարերկրացի հարազատներին կանչելու, ինչպես նաեւ քաղաքական ապաստան դահանջելու դայմանները նոր օրենքով խիստ սահմանափակված են: Ֆրանսիայում աճող ատելություն կա օտարերկրացի ներգաղթողների նկատմամբ:

Կամբոջայում ընտրությունները կկայանա՞ն

Պեկինում հավաքված կամբոջական հակամարտ 4 կողմերից երեքը, իշխան Սիհանուկի ներկայությամբ նիստ գումարելով որոշեցին կայացնել ներկա ամսի 23-27-ը նախատեսված խորհրդարանական ընտրությունները, ՄԱԿ-ի հովանավորության տակ: Ժողովին ներկա չէին կարմիր քմերների ներկայացուցիչները, որոնք վերջին օրերին սաստկացրել են խափանարար գործողություններն ընտրությունները խոչընդոտելու մտադրությամբ: Չորեքշաբթի օր քմերները Քոմպոնգ Թոմի մարզում հարձակվել էին չինական մի կայազորի եւ լեհական ծառայության կենտրոնի վրա:

Շրի Լանկան հրաժեշտ տվեց իր նախագահին

Հարյուր հազարավոր շրիլանկացիներ մայրաքաղաք Կոլոմբոյում երեկ վերջին հարգանքը մատուցեցին շաբաթ օրն ինքնասպանական ռմբահարման զոհ դարձած իրենց նախագահ Պրեմադասային: Քաղաքում ապրող թամիլ ցեղախմբի անդամները նախորդ հեռացան իրենց բնակարաններից, զգուշանալով վրեժխնդրական վայրագություններից, քանի որ կառավարական զորքերը թամիլների «վագրեր» զինյալ կազմակերպությանն են վերագրում նախագահի սպանությունը:

Արաբները համաձայնական ոգով

Վաշինգտոնում արաբ իսրայելական խաղաղության բանակցությունների մասնակից արաբական դատվիրակությունները հայտարարեցին, թե առաջի կա շաբաթ կմնան իրենց ժողովավայրում, խոսակցություններին հաջողության առիթ տալու մտադրությամբ: Ամերիկյան դեսպարտուղարությունը ողջունեց բանակցություններին հավելյալ մեկ շաբաթ տրամադրելու արաբական այդ դիրքորոշումը: ■

digitised by A.R.A.R.@

Մամուլ

ԱԴՐԲԵՋԱՆԻՑ ՆԵՐՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԽԱՂԱՑՈՒՄԸ ՎՏԱՆԳՈՒՄ Է ՆՐԱՆՑ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Ամերիկյան «Նյուզուիք» շաբաթաթերթը մայիսի 3-ի համարում վերեւի խորագրի տակ (Costly victories - The Armenians advance in Azerbaijan is jeopardizing their homeland) երկու էջ է հատկացրել հայ-ադրբեջանական հակամարտության վերջին զարգացումներին: Թերթի հայտնի աշխատակիցներից Սկոտ Սոլիվանի Երեւանից եւ Ստեփանակերտից ուղարկված թղթակցությանն ընկերանում են երկու լուսանկար եւ մեկ քարտեզ: Առաջինը ավելի մեծ ղլանի վրա ներկայացնում է հակատանկային զենքով ու ավտոմատով երկու մարտիկների, որոնց ետեւում կանգնած է մարտական զգեստով մի կին, բոլորն էլ ժոլիտը դեմքերին: Մորուսավոր, խոիվ մազերով կամ անճոռնի գլխարկով ու երբոնից կախ սիգարետի մնացուկով այդ դեմքերը, ինչպես միջազգային մամուլում հաճախ հանդիպող նման լուսանկարներում, հավանաբար համակրանք կամ վստահություն չեն առաջացնելու թերի հարյուր հազարավոր ընթերցողների մոտ: Հակադրես, երբ լուսանկարիչը հայ է, պետք է խուսափել աֆղանական կամ բոսնիական ծանոթ դասկերները կրկնող տեսարաններից: Մանավանդ որ կողքի՝ երկրորդ լուսանկարը դասկերում է ադրբեջանցի՞, թե ռուս սղանված մի զինվորի ու նրա ընկերների տխուր դեմքերը: Այդ երկու լուսանկարները ստեղծում են ոչ հայանոյաս մի հակադրություն՝ միշտ օտար ընթերցողների հայեցակետով:

Հոդվածագիրը նկարագրում է կովկասյան ձյունածածկ, գեղեցիկ լեռների գրկում կրակի շուրջ նստած մի խումբ հայ մարտիկներ, որոնք մամսանենգված «Մարլբորո» են ծխում (մինչդեռ գիտենք, թե մեր մարտիկները հաճախ զրկված են ամենահասարակ ծխախոտից անգամ) ու դասմում, թե ինչպես են գրավել Քելբաջարը: «Այդ փոքրիկ ճակատամարտը, գրում է թղթակիցը, փոխեց նախկին Խ. Միության ամենից անգութ ազգամիջյան դատերազմի ամբողջ հաշվեկշիռը: Հայկական ուժերին այն տվեց 50 կմ լայնքով մի տարածք, որն ընկած է նախատես Ադրբեջանում մեկուսացած Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի միջեւ: Դա դասճառ դարձավ, որ արյունահեղության որեւէ ավարտը թվա ավելի հեռու, քան երբեւիցե»:

«Ղարաբաղում հայ-ադրբեջանական հակամարտության արմատները, բացատրում է հոդվածագիրը, երկարում են մինչեւ շրջանի երկար ու վայրագ դատմության խորքերը, հատկապես 1915 թ. ջարդերը, երբ թուրքերը ոչնչացրին հայ ազգաբնակչության ավելի քան կեսը եւ գրավեցին Հայաստանի կեսից ավելին: Հայերի եւ ադրբեջանցիների միջեւ (որոնց հայերը «թուրք» են անվանում) ատելությունն անսահման է: Սակայն դատերազմն ավելին է, քան ատելության մի նոր բռնկում: Հայաստանը սահմանակից է Թուրքիային եւ Իրանին, որոնք երկուսն էլ ձգտում են իրենց ազդեցությունը տարածել դեպի Կենտրոնական Ասիայի մահմեդական հանրապետություններ, նորայալ Ադրբեջանը, եւ Ղարաբաղում դատերազմը խնդրո առարկա է դարձնում Ռուսաստանի, Թուրքիայի եւ Իրանի կենսական շահերը»:

«Մենք իրավունք ունենք ազատ ադրելու», ասել է ԼՂՀ ԳԽ նախագահի դատասանական գործերով Գեորգի Պետրոսյանը «Նյուզուիքի» թղթակցին, եւ մենք ազատ կարող ենք լինել միայն մեր տահմանները ապահովելով»: «Ադրբեջանցիները, գրում է Սոլիվանը, խաղաղության որեւէ բանակցությունից առաջ դահանջում են իրենց տարածքը, ինչպես նաեւ իրենց գյուղերից ու տնտեսություններից վտարված ադրբեջանցիների համար հատուցում: Հայաստանը գտնվում է այս բոլորի արանքում, դժվարին վիճակում, մի կողմից հանձնառու լինելով Ղարաբաղի հայերին թիկունք կանգնելու գործին, մյուս կողմից գիտակցելով, որ տարածքային զիջումներն անհրաժեշտ են խաղաղություն ստանալու համար: «Գլխավոր հարցն այն է, թե արդյոք կարո՞ղ ենք չափավորեցնել ղարաբաղցիներին», ասում է Վահան Փափազյանը (հոդվածագիրը սխալմամբ գրել է Փափիզյանը), Հայաստանի արտգործնախարար»:

Այնուհետեւ, դատմելով արգավոցի լրագրող Մայիս Բաղդասարյանի որդու մարտական դանակով երեւակայական թուրքեր սպանող 8-ամյա Սուրենի մասին, հոդվածագիրը եզրակացնում է, թե Ղարաբաղում ոչ ոք չի գնա չափավորվածության: «Մինչդեռ, գրում է նա, Հայաստանի համար բանակցված խաղաղությունը հավանաբար կլանքի ու մահվան հարց է», նկատի ունենալով երկրի դժվարին դայմանները, շրջափակումը, շրջանաբեր չունենալը եւ այլն: «Հայաստանում կլսենք մի ինչ ավելի տանելի է գյուղական շրջաններում, գրում է «Նյուզուիքի» թղթակիցը: Անցյալ տարի հայկական կառավարությունը սեփականաշնորհեց մշակելի հողերը: Սակայն նոր հողատերերին դակասում է սերմացուն, դարարատանյութը: Այսքան տառապանքների ու զրկանքների դայմաններում Հայաստանը ինչ կամ ընդհանրապես ոչ մի առաջխաղացում չի արձանագրել կոմունիզմից տնտեսական տնտեսության անցնելու գործում: Հանրապետությունը դեռեւս չունի սահմանադրություն, բեւեռակնկալվում է, որ աշնանը ընդունվի մեկը: Բանկային համակարգ չկա, առեւտրական ընկերությունների կամ բիզնեսի մասին օրենք չկա, ոչ էլ նախադայմաններ՝ դրսից շահույթներ երկիր վերադարձնելու: Հայաստանը կադիտալիզի համար ենթակառույց ստեղծելու գործում առնվազն երկու տարով ետ է մնում Արեւելյան Եվրոդայի երկրներից եւ մեկ տարով՝ նախկին խորհրդային մյուս հանրապետություններից»: «Ամերիկյան դրամատերերի համար այստեղ ներդնելու ոչինչ չկա», ասել է թղթակիցին Երեւանում հավատարմագրված Եվրոդայի կարեւոր դիվանագետներից մեկը: «Նույնիսկ ռուսները, գրում է նա, հակառակ իրենց երկրում գոյություն ունեցող այդման դժվարություններին, Հայաստանին մոտենում են որդես անդունդի կամ դժոխքի: «Սա ամոր է», ասել է Սերգեյ Գոնդարովը, Երեւանում ծառայող ռուս դիվանագետներից մեկը:

Վերջում հոդվածագիրը գրում է, «Առայժմ հայերը տանում են բոլոր դժվարությունները, քանի որ նրանք Ղարաբաղի դատերազմը համարում են ազգային խաչակրություն, մի առիթ՝ վերատիրանալու քրիստոնեական դարաշրջանի սկզբում իրենց վայելած հարարության եւ ազգային արժանավորության: Եւ Ղարաբաղում հայ ֆիդայիների վերջին հաղթանակները ամրադնդել են «հայ հայեցին» իրենց հավատամքի մեջ: Սակայն Երեւանում, ինչպես Ստեփանակերտում, ցնծության նշաններ չկան: Հրեաների նման հայերն էլ իրենց համարում են առանձնահատուկ, բայց վտանգված ժողովուրդ: Նրանք հավատացած են, որ եթե Ղարաբաղը կորցնեն, «թուրքերը» հարձակվելու են նույնիսկ Հայաստանի վրա եւ ոչնչացնելու իրենց: Եթե խաղաղություն չհաստատվի, Հայաստանը չի կարող վերադրել: Սակայն հորիզոնի վրա խաղաղությունը չի երեւում, եւ վստահ էլ չեմ, որ այն հնարավոր է»:

Newsweek,
մայիս 3, 1993

Բանակ

Նավթի 80 տարվա դաբարներ

Ադրբեջանում միայն Կասպից ծովի ափամերձ ծանծաղուտի հանքավայրերում նավթի ավելացած դաբարները գերազանցում են արդյունահանումը 15 անգամ, ինչը շատ հազվադեպ է հանդիպարհային դրակտիկայում: Ինչպես հաղորդեցին Ադրբեջանի ծովափնյա նավթահանքավայրերի մշակման գիտահետազոտական նախագծային ինստիտուտում, ամբողջ աշխարհում նկատվում է արդյունահանման անկման միտում, եւ, ըստ կանխագուշակումների, այն կշարունակվի: Պատճառն այն է, որ բոլոր նավթային երկրներում, այդ թվում Մերձավոր Արեւելքի երկրների հանքավայրերում, սկսած 1970 թ. արդյունահանված նավթի տարեկան ծավալները գերազանցում են դաբարների ածը: Օրինակ, ԱՄՆ-ի 24 խոշոր հանքավայրերից (որոնց դաբարները ավելի քան 100 միլիոն տոննա է) երեքը հայտնաբերել են վերջին 40 տարիների ընթացքում, իսկ մնացածը մինչեւ 1950 թ.: Նույնը վերաբերում է նաեւ Ադրբեջանի 37 ցամաքային հանքավայրերին, որից միայն 7-ն են հայտնաբերվել 1950 թ. հետո, իսկ մնացածը՝ մինչեւ հեղափոխությունը եւ երկրորդ համաշխարհային դատերազմը: Բացառություն է կազմում նախկին «Կասպմորնեֆտեգազ» միավորումը: Այս տարվա վերջին 10 տարիների ընթացքում ապա, գտված դաբարները գերազանցում է արդյունահանումը 12-15 անգամ: Ադրբեջանի 37 ցամաքային հանքավայրերից մինչեւ 1991 թ. սկիզբը (այսինքն 120 տարվա ընթացքում) արդյունահանվել է 917 միլիոն տոննա նավթ, ինչը համադատասխանում է դուրս հանվող դաբարների 81 տոկոսը (չհաշված այն դաբարների, որոնք մնում են ընթացքում):

Մնացորդային դաբարները (գետնի տակ) կազմում են 185 միլիոն տոննա: Եթե հաշվի առնենք, որ բոլոր այդ հանքավայրերից տարեկան արդյունահանվում է 2,3 միլիոն տոննա նավթ (արդյունահանվող մնացորդային դաբարների 1,2 տոկոս), ապա այդ դաբարները բավական են մոտ 80 տարի: Մնացորդային դաբարներն արդյունահանելու համար անհրաժեշտ է հորատել եւս 20 հազար նավթահոր (այսօր ցամաքում գործում է 9,200 նավթահոր), քանի որ գործող նավթահորերից 30 տոկոսը, որոնք սպառել են ամորտիզացիոն ժամկետը, կվերացվեն: Համեմատության համար նշենք, որ Ադրբեջանի նավթային արդյունաբերության 120 տարվա դատմության ընթացքում հորատվել է մոտ 31 հազար նավթահոր: Հինգկան խնդիրը՝ տարեկան հորատել 700-800 նավթահոր: Եթե նույնիսկ մինչեւ 2020 թ. շահագործման կմտցվի 8300 նոր նավթահոր, նավթի ցամաքային արդյունահանումը հնարավոր է հասցնել մինչեւ 36 միլիոն տոննա, այսինքն ավելացնել ավելի քան 1,5 անգամ: Վերջին 15 տարիների ընթացքում Աղշերոնի թերակղզու հանքավայրերում հորատել են 1296 նավթահոր, որից 1118 գործում են մինչեւ այսօր, իսկ 1991 թ. այնտեղ արդյունահանվել է 545 հազար տոննա նավթ:

Սնարք

Երեւան

Պատգամավորները բացում են «սեզոնը»

Երրաղխորհրդի առաջին գումարման 5-րդ նստաշրջանը երեկ սկսելով իր աշխատանքները, իր հենց առաջին քայլով շրջանցեց առաջին հարցը՝ Երեւանի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի եւ բյուջեի մասին եւ կանդրադառնա մեկ շաբաթից, մինչեւ հանրապետության կառավարությունը կիմնարկի դա:

Նստաշրջանի աշխատանքների հետագա շարունակումն առաջարկվեց սկսել «ցանկացած հարցից» եւ այդ բախտին արժանացավ օրակարգի հաջորդ հարցը՝ դատգամավորական հանձնաժողովների հաշվետվությունը, դրանց անդամների համալրումը: Գուցե այդ էր դատճառը, որ նստաշրջանի երեկվա աշխատանքների ավարտին մոտենալու հետ նոստանում էին Երրաղխորհրդի դատգամավորների շարքերը: «Ազգ»

Հայաստանում նվազագույն կենսաթոշակ 3000 ռուբլի է ստանում 179376 թաշակառու: Ինչպես հայտնեց աշխատանքի եւ սոցիալական ապահովության նախարարության աշխատակիցը, ներկայումս Հայաստանում հաշվվում է 468732 կենսաթոշակառու, որից 179776-ը ստանում է նվազագույն կենսաթոշակ (3000 ռուբլի): Երեւանում կենսաթոշակառուների թիվը 162029 է, իսկ նվազագույն կենսաթոշակ ստացողներինը 54836: ԵՏ

Մի՞թե

Ադրբեջանի անվտանգության նախարարության լրատվական վարչությունը տարածել է մի հայտարարություն, համաձայն որի Քելբաջարի շրջանից Հայաստանի զինված կազմավորումների մի մասի դուրս բերումը ոչ մի կապ չունի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822 բանաձեւի հետ: Ըստ հայտարարության, մամուլն ադավաղել է Ադրբեջանի ազգային անվտանգության նախարար Խահրադին Թահմազովի խոսքերը: Վերջինս նման ելույթ է ունեցել մայիսի 4-ին Ադրբեջանի միլլի մեջլիսում: Այս մասին հաղորդում է Սնարք գործակալությունը: Ադրբեջանի անվտանգության նախարարության լրատվական վարչությունը հաղորդում է, թե նախարարի ելույթում խոսք է գնացել միայն Քելբաջարի շրջանի տարածքից ձեռնարկությունների սարքավորումների եւ քաղաքացիների անձնական գույքի դուրսբերման մասին:

Թուրան գործակալությունը հաղորդում է, թե հետախուզության տվյալների համաձայն, այդ առթիվ Ղարաբաղի զինված կազմավորումների եւ Հայաստանի ազգային բանակի ստորաբաժանումների միջեւ միջադեպ է արձանագրվել: Ղարաբաղյան կազմավորումներն իր դահանջել են հարգել նախորդ ձեռք բերված այն համաձայնությունը, ըստ որի Քելբաջարի շրջանի տարածքում թալանված իրերը դետք է կիվվեն հավատար: Միջադեպի հետեւանքով երկու կողմերի միջեւ տեղի է ունեցել զինված բախում, որի ընթացքում զոհվել է 9 մարդ: Նույն աղբյուրները հաղորդում են նաեւ, թե վախենալով հակամարտության ընդլայնումից՝ Հայաստանի զինված ուժերի հրամանատարությունը սպոված է եղել իր «մեղավոր» ստորաբաժանումներ դուրս բերել Քելբաջարի շրջանի տարածքից եւ տեղաբաշխել Վարդենիսի շրջանում փոխարենը Քելբաջար ուղարկելով նոր վաշտ:

Հայաստանի դաշտպանության նախարարության լրատվական ծառայությունից հերքեցին ադրբեջանական զանգվածային լրատվության միջոցներով տարածված այս տեղեկությունները՝ մեկ անգամ եւս հայտարարելով, թե նման միջադեպ տեղի ունենալ չէր կարող այն դարզ դատճառով, որ Հայաստանը ոչ միայն Քելբաջարի շրջանում, այլեւ ընդհանրապես Ադրբեջանի տարածքում ոչ մի զինվոր չունի: Իր հերթին, այս տեղեկությունները հերքեցին նաեւ ԼՂՀ ինքնադաշտպանության ուժերի շտաբից՝ հայտարարելով, թե Քելբաջարի շրջանի տարածքից դուրս են բերվել ոչ թե Հայաստանի, այլ Ղարաբաղի զինված կազմավորումներ: Նույն աղբյուրները հայտնեցին նաեւ, թե այդ գործողության միակ նպատակն էր ցույց տալ, որ ԼՂՀ ինքնադաշտպանության ուժերի կողմից Քելբաջարի շրջանի գրավումն ինքնանպատակ չէր եւ զուտ դաշտպանական նպատակներ էր հետապնդում:

Ինքնին հասկանալի է ադրբեջանական քարոզչական մեքենայի այս հերթական աղաղեղկասվությունը հայտնելիքի համար դարարտեղի հողերը: Սակայն նոր հողատերերին դակասում է սերմացուն, դարարատանյութը: Այսքան տառապանքների ու զրկանքների դայմաններում Հայաստանը ինչ կամ ընդհանրապես ոչ մի առաջխաղացում չի արձանագրել կոմունիզմից տնտեսական տնտեսության անցնելու գործում: Հանրապետությունը դեռեւս չունի սահմանադրություն, բեւեռակնկալվում է, որ աշնանը ընդունվի մեկը: Բանկային համակարգ չկա, առեւտրական ընկերությունների կամ բիզնեսի մասին օրենք չկա, ոչ էլ նախադայմաններ՝ դրսից շահույթները երկիր վերադարձնելու: Հայաստանը կադիտալիզի համար ենթակառույց ստեղծելու գործում առնվազն երկու տարով ետ է մնում Արեւելյան Եվրոդայի երկրներից եւ մեկ տարով՝ նախկին խորհրդային մյուս հանրապետություններից»: «Ամերիկյան դրամատերերի համար այստեղ ներդնելու ոչինչ չկա», ասել է թղթակցին Երեւանում հավատարմագրված Եվրոդայի կարեւոր դիվանագետներից մեկը. «Նույնիսկ ռուսները, գրում է նա, հակառակ իրենց երկրում գոյություն ունեցող այդման դժվարություններին, Հայաստանին մոտենում են որդես անդունդի կամ դժոխքի: «Սա ամոր է», ասել է Սերգեյ Գոնդարովը, Երեւանում ծառայող ռուս դիվանագետներից մեկը:

Քելբաջարում հայ-ղարաբաղյան բախումնե՞ր

Հայաստանի դաշտպանության նախարարության լրատվական ծառայությունից հերքեցին ադրբեջանական զանգվածային լրատվության միջոցներով տարածված այս տեղեկությունները՝ մեկ անգամ եւս հայտարարելով, թե նման միջադեպ տեղի ունենալ չէր կարող այն դարզ դատճառով, որ Հայաստանը ոչ միայն Քելբաջարի շրջանում, այլեւ ընդհանրապես Ադրբեջանի տարածքում ոչ մի զինվոր չունի: Իր հերթին, այս տեղեկությունները հերքեցին նաեւ ԼՂՀ ինքնադաշտպանության ուժերի շտաբից՝ հայտարարելով, թե Քելբաջարի շրջանի տարածքից դուրս են բերվել ոչ թե Հայաստանի, այլ Ղարաբաղի զինված կազմավորումներ: Նույն աղբյուրները հայտնեցին նաեւ, թե այդ գործողության միակ նպատակն էր ցույց տալ, որ ԼՂՀ ինքնադաշտպանության ուժերի կողմից Քելբաջարի շրջանի գրավումն ինքնանպատակ չէր եւ զուտ դաշտպանական նպատակներ էր հետապնդում:

Ինքնին հասկանալի է ադրբեջանական քարոզչական մեքենայի այս հերթական աղաղեղկասվությունը հայտնելիքի համար դարարտեղի հողերը: Սակայն նոր հողատերերին դակասում է սերմացուն, դարարատանյութը: Այսքան տառապանքների ու զրկանքների դայմաններում Հայաստանը ինչ կամ ընդհանրապես ոչ մի առաջխաղացում չի արձանագրել կոմունիզմից տնտեսական տնտեսության անցնելու գործում: Հանրապետությունը դեռեւս չունի սահմանադրություն, բեւեռակնկալվում է, որ աշնանը ընդունվի մեկը: Բանկային համակարգ չկա, առեւտրական ընկերությունների կամ բիզնեսի մասին օրենք չկա, ոչ էլ նախադայմաններ՝ դրսից շահույթները երկիր վերադարձնելու: Հայաստանը կադիտալիզի համար ենթակառույց ստեղծելու գործում առնվազն երկու տարով ետ է մնում Արեւելյան Եվրոդայի երկրներից եւ մեկ տարով՝ նախկին խորհրդային մյուս հանրապետություններից»: «Ամերիկյան դրամատերերի համար այստեղ ներդնելու ոչինչ չկա», ասել է թղթակցին Երեւանում հավատարմագրված Եվրոդայի կարեւոր դիվանագետներից մեկը. «Նույնիսկ ռուսները, գրում է նա, հակառակ իրենց երկրում գոյություն ունեցող այդման դժվարություններին, Հայաստանին մոտենում են որդես անդունդի կամ դժոխքի: «Սա ամոր է», ասել է Սերգեյ Գոնդարովը, Երեւանում ծառայող ռուս դիվանագետներից մեկը:

Վերջում հոդվածագիրը գրում է, «Առայժմ հայերը տանում են բոլոր դժվարությունները, քանի որ նրանք Ղարաբաղի դատերազմը համարում են ազգային խաչակրություն, մի առիթ՝ վերատիրանալու քրիստոնեական դարաշրջանի սկզբում իրենց վայելած հարարության եւ ազգային արժանավորության: Եւ Ղարաբաղում հայ ֆիդայիների վերջին հաղթանակները ամրադնդել են «հայ հայեցին» իրենց հավատամքի մեջ: Սակայն Երեւանում, ինչպես Ստեփանակերտում, ցնծության նշաններ չկան: Հրեաների նման հայերն էլ իրենց համարում են առանձնահատուկ, բայց վտանգված ժողովուրդ: Նրանք հավատացած են, որ եթե Ղարաբաղը կորցնեն, «թուրքերը» հարձակվելու են նույնիսկ Հայաստանի վրա եւ ոչնչացնելու իրենց: Եթե խաղաղություն չհաստատվի, Հայաստանը չի կարող վերադրել: Սակայն հորիզոնի վրա խաղաղությունը չի երեւում, եւ վստահ էլ չեմ, որ այն հնարավոր է»:

Newsweek,
մայիս 3, 1993

Վերջին

Երեւանի հողն աղտոտված է նաեւ մետաղներով

Երեւան, 6 մայիս. Սնարք: Երեւանում բանջարաբուծության լայն զարգացման կապակցությամբ Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնը նախազգուշացնում է, հողը քաղաքի շատ հատվածներում աղտոտված է ծանր մետաղներով: Բանջարեղենի առանձին տեսակներ, հատկապես, արմատապտուղներն իրենց մեջ կուտակում են հողի մեջ պարունակվող, ա ողջության համար վտանգավոր քիմիական էլեմենտները: Այդպիսի բանջարեղենի օգտագործումը կարող է հանգեցնել լուրջ հետեւանքների, Սնարքի թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ նշեց կենտրոնի ղեկավար Արմեն Սաղաթելյանը: Ելնելով ստեղծված ծանր ժամանակային իրավիճակից, բնակչության դասները կոչ են անում երեւանցիներին, զգույշ եղեք, հատկապես խուսափեք ածելցնել բանջարեղենն ավտոճանապարհների եւ մարգասեզների եզրերում:

digitised by A.R.A.R.@

Դիտարկում

ՍԵՊՏԵՄԲԵՐԸ ԿԳԱ՞ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՎ

Դոյոցական դասագրքերն անցյալ տարի տանջալի ճանապարհ անցնելուց հետո մի կերպ հասցեատերերին գտան, այն էլ խիստ բանկ գներով: Ընդ որում, ծրագրված 43 դասագրքերից 9-ը մինչև հիմա էլ դեռ աբխտարի չեն եկել, զուտ տեխնիկական ուշացումներով:

1993-94 թթ. ուսումնական տարվա համար նախատես ծրագրված էր տպագրել 60 անուն դասագիրք, 3 մլն 424 հազար ընդհանուր տպաքանակով, որոնցից 52-ը նոր գրվող: Այսօրվա դրությամբ «Լույս» հրատարակչությանն են ներկայացված 43 անուն նոր դասագրքերի ձեռագրեր, ավելացրած նաև վերահրատարակվողները: Ցավոք, ինչպես տեղեկացանք ՀՀ լուսավորության նախարարության ծրագրամեթոդական բաժնի ղեկ Համլետ Կարապետյանից, առայսօր տպագրված ոչ մի դասագիրք չկա: Իսկ տպագրությունը ղեկտ է ավարտվի մինչև օգոստոսի 20-ը: Եթե հաշվի առնենք, որ բավական ժամանակ է անցել ու այդ ընթացքում ոչ մի դասագիրք չի տվել, արդա երաշխիք կա՞, որ մինչև օգոստոսի 20-ը դասագրքերի տպագրությունը հնարավոր կլինի ավարտել: Մանավանդ որ դրա իրականացումը դրված է մեկ «Լույս» հրատարակչության վրա, իսկ լուսավորության նախարարությանը հնարավորություն չի տրված վերահսկել ոչ տպագրության ժամկետը, ոչ որակը եւ ոչ էլ գինը: Պրն Կարապետյանը նշեց, թե «որքան էլ սարսափելի է, կառավարության որոշմամբ որպես «դասագրքերի դասվեր տեղադրող» ճանաչվել է մամուլի դեպարտամենտը»: Այդ որոշումը, բացի նրանից, որ լուսավորության նախարարությանը հնարավորություն չի տալիս վերահսկել դասագրքերի ճակատագիրը, նրան նաև զրկում է այլ հրատարակչություններ ընտրելուց, նաև նրանց դասագրքերի տպագրության դասվերներ տալուց: Մինչդեռ դա ավելի կնդաստեր դասագրքերի արագ, ժամանակին եւ զուտ նաև որակով տպագրվելուն, ինչպես նաև թերեւս ավելի ցածր լիներ նրանց գինը: Եթե ներգրավվեին նաև այլ հրատարակչություններ, արդա կարելի կլիներ ստեղծել մրցակցություն նրանց միջեւ: Իսկ քանի դեռ մենաշնորհը գտնվում է մեկի ձեռքին, արդա նա էլ կարող է թելադրել իր պայմանները եւ գինը:

Դասագրքերի տպագրության առաջարկներ եղել են նաև այլ հրատարակչություններից, սակայն «մենք հնարավորություն չունենք նրանց դասվերներ տալ, որովհետեւ ֆինանսավորումը կատարում է մամուլի վարչությունը, եւ նա ֆինանսավորում է միայն «Լույս» հրատարակչությանը», իր դժգոհությունը հայտնեց ծրագրամեթոդական բաժնի պետը:

Փաստորեն նախարարությունն ինքը կառավարության կողմից որպես դասվիրատու ճանաչված չէ, հնարավորություն չունի դասագրքերի տպագրության ընթացքը հսկել. սակայն բոլորն էլ գիտեն, որ միեւնույն է, ում էլ ճանաչեն դասվիրատու, մեկ է, ոչ ոք նախարարության վրայից չի վերցնում դոյոցներին դասագրքերով աղահովելու խնդիրը եւ մեղադրանքը միշտ էլ կամա-ակամա ուղղում են նրան: Ուրեմն ճիշտ չի՞ լինի, եթե հաջորդ ուսարվա դասագրքերի դեպքում դասվեր տեղադրող ճանաչվի լուսավորության նախարարությունը եւ դասագրքերի տպագրության գործն ամբողջովին նրա հսկողության տակ լինի:

Դասագրքերի տպագրության համար կառավարությունը մամուլի վարչությանը 200 մլն ռուբլի դրամաշնորհ է հատկացրել: Անցած տարի այդ գումարը կազմում էր 70 մլն ռուբլի, սակայն, երբ հաշվի առնենք արժեզրկման բարձր եւ նաև որ դասագրքերի նախատեսված քանակն այս տարի ավելի շատ է, արդա հատկացված գումարն այնքան էլ դրամաշնորհ չի երեւում:

Ինչպես, այս գումարով դասագրքերի գինը որոշակիորեն իջեցվելու է: Անցյալ տարի, եթե հիշում եք, դոյոցական դասագրքերի միջին գինը 40 ռուբլի էր... խանութում:

Ինչպես հայտնեց պրն Կարապետյանը, դասագրքերի այս տարվա գինը դեռեւս հայտնի չէ. «Որքան էլ նախարարությունը դնդեց, որ դասագրքի վրա գինը տրվի (նախկինում տրված դասագրքերի մասին է խոսքը), այնուամենայնիվ չկարողացանք հասնել դրան», ասաց նա: Իբրեւ դասճառաբանություն բերվում է այն փաստարկը, որ տպագրողները չգիտեն, թե մինչեւ դասագրքի բողարկումը գինն ինչ է լինելու: Այդուհանդերձ, եթե հրատարակվող մյուս գրքերի համար «գինը դայմանագրային» արտահայտությունն ընդունելի է, արդա դասագրքերի հարցում այն դեռ է որոշակիացվի, քանզի դրանց համար դեպական դոտացիա է տրվել:

Ընդունենք, թե գինը որոշվեց: Իսկ որքանով է նդատակահարմար ամեն տարի հսկայական ծախսերով դասագիրք տպելուց հետո այն վաճառել, այսինքն հանձնել անվերադարձ: Չէ՞ որ գնողը դառնալով նրա սեփականատեր, կարող է իր ուզածի դես տնօրինել նրա ճակատագիրը, իսկ դոյոցում հաջորդ տարի եւս այդ դասագրքի դահանջը լինելու է: Ուրեմն ավելի լավ չէ՞ նախկին գրքերի եւ վերադարձվող համակարգը բողնել ուժի մեջ կամ նոր ձեւով այն կատարել, ամեն դեպքում վաճառքը բացառելով: Մանավանդ ամեն դ չէ, որ կարող է դասագիրք գնել, իսկ այս տարի դրանք դժվար թե 40 ռ. արժենան, թեեւ կառավարության կողմից գումար է հատկացվել ացիալառես անդահով ընտանիքների երեխաներին անվճար դասագրքերով ապահովելու համար:

Պրն Կարապետյանն այս առթիվ հայտնեց, թե որոշեցի վաճառվող դասագրքերի անվերադարձ կորուստ չունենա, անհրաժեշտ է ստեղծել դասագրքերի հետգնման մեխանիզմ: Այդդիսին առայժմ հաստատված չկա, բայց դրա վերաբերյալ առաջարկություն կա, ընդ որում ոչ թե գումարն է վերադարձվելու (դա առաջարկության), այլ հաշվի առնելով դասագրքերի մաշվածության աստիճանը, դրանք փոխանակվելու են նորերով:

Դասագրքերը կարող են փոխանակվել նորերով, իսկ փոխվելո՞ւ է վերաբերմունքը դասագրքերի տպագրության նկատմամբ: Թե նորից «երբ գալիս է սեպտեմբերը» արտահայտությունը մեզ ուրախացնելու է միայն նոյնանուն կինոնկարի կողակցությամբ:

ԳԱԳԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Դիտարկում

Այդման էլ ընդգծված խստականությո՞ւն

Մայիսի 9-ի, առհասարակ երկրորդ համաշխարհայինի մասնակիցների հետ կապված բարդ սոցիալ-բարոյական հարցերը հուզում են շատերին: Ստորեւ մի հատված ընթերցողներից մեկի նամակից:

ԼՂՀում ադրբեջանցիների դեմ մարտնչող հայ ազատամարտիկների նկատմամբ կառավարության սահմանած արտոնությունների մասին եղած որոշումը (հեռախոսավարձի 50 տոկոսի զեղչ) խրախուսելի ու ողջունելի է: Բայց ինչո՞ւ է անտեսվում երկրորդ աշխարհամարտին մասնակցած մարտնչողների դերը: Դա առնվազն տարակուսանք ու զարմանք է առաջացնում: Չէ՞ որ 1941-42 թթ. պատերազմի ծանր տարիներին հատկապես Ստալինգրադի ճակատամարտի ելքից էր կախված Թուրքիայի Կովկաս մտնել չմտնելը: Իսկ դա կնշանակեր հայ ժողովրդի երկրորդ եղեռնի կազմակերպում: Թուրք ենիչերիներին զսպաբաթիկ հագցնելը ոչ միայն Ստալինգրադի ճակատամարտով էր պայմանավորված, այլեւ ընդհանուր թշնամու դեմ տարած հաղթանակով: Հետեւաբար այդ հաղթանակի աղահովման մեջ հայ ժողովրդի լավագույն զավակներն իրենց ներդրումն ունեն եւ պատմության մեջ փառավոր էջեր են գրել: Երկրորդ աշխարհամարտի մասնակիցներն այսօր պառիկներ ու տարիկներ են, եւ նրանց թոռներն ու ծոռներն այսօր մարտնչում են Լեռնային Ղարաբաղում եւ արժանի են ամենայն խրախուսանքի: Բայց չլինե՞լ է անտեսել ու խստականություն դնել (խոսքը արտոնությունների մասին է) նրանց իրավունքների միջեւ: Դա ամենահիշը սխալ եւ չմտածված մոտեցում է, որը տարակուսանքի տեղիք է տալիս:

Խ. ԵՐԻՑՅԱՆ
Երկրորդ աշխարհամարտի մասնակից,
2-րդ կարգի թոշակառու

Կանցկացվեն Հաղթանակի օրվան նվիրված միջոցառումներ

Երեւանի գործկոմի մշակույթի վարչությունը մշակել է Հաղթանակի օրվան նվիրված մայիսի 8-ին եւ 9-ին անցկացվելիք միջոցառումների ծրագիր: Ըստ այդ ծրագրի, մայիսի 8-ին, ժամը 16-ին Օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնում տեղի է ունենալու համերգ, իսկ մայիսի 9-ին մայրաքաղաքի տարբեր շրջաններում գտնվող զբոսայգիներում՝ Հաղթանակի, Կիրովի անվան, Կոմիտասի եւ այլն, անցկացվելու են բազմաբնույթ արարողություններ նվագախմբերի, երգի-պարի խմբերի, թատրոն-ստուդիաների մասնակցությամբ:

«Ազգ»

Հայաստանի Ամերիկյան համալսարան

Հայաստանի Ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) կազմակերպում է դասընթաց «Միջազգային տնտեսական հարաբերություններ» թեմայով:

Դասախոսությունները կանցկացվեն մայիսի 18-ից հունիսի 8-ը, 1993, երեքշաբթի եւ հինգշաբթի օրերին, երեկոյան ժամը 6.00-9.00:

Դասախոսությունները կընթանան անգլերեն լեզվով, միաժամանակյա թարգմանությունն աղահովվում է:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք զանգահարել Հայաստանի Ամերիկյան համալսարան 27.33.70 հեռախոսահամարով:

Ընթերցում

Հերթական անբարյացակամություն

Բաթումում հատկապես 19-րդ դարից սկսած եղել է հայկական գաղութ, որի բնակիչները հիմնականում գաղթել էին Արդվինից, Տրապիզոնից, Սամսունից, Սեբաստիայից, Էրզրումից եւ այլ վայրերից: Գործարար ու ձեռներեց հայերն այստեղ ունեին առեւտրական տներ, խանութներ եւ այլ հաստատություններ, ինչպես օրինակ՝ Ակինյանց եղբայրների ճոթեղենի խանութը, Խ. Մարտիրոսյանցի ծխախոտի ֆաբրիկան եւ այլն: Քաղաքում մեծ համբավ ուներ հայտնի լուսանկարիչ Ա. Շահանյանը, որը ծնունդով Սուխումից էր: Տեղի հայոց առաջնորդական վեհաշուք եկեղեցին կառուցվել է 1885 թ., Խրիմյան Հայրիկի անդուլ ջանքերով: Նավահանգստային այս քաղաքում հայերն աղրել են հասարակական-մշակութային լիարժեք կյանքով: Գործել են հայկական եկեղեցական-ծխական արական, իգական, տարրական, կաթոլիկական եւ արհեստավարական դպրոցներ: Լայն գործունեություն են ծավալել Կովկասի հայոց բարեգործական ընկերությունն մասնաճյուղը եւ Հայ կանանց միությունը: 1886-ին կազմակերպվել է հայկական թատրոն: Ք. Կարա-Մուրզան (1898 թ.) եւ Կոմիտասը (1910 թ.) այս քաղաքում ստեղծել են երգչախմբեր: Բաթումի արդյունաբերության եւ քաղաքաշինության մեջ մեծ ավանդ ունի անվանի նավաշարդյունաբերող ու բարերար Ալ. Մանթաշյանը: Այստեղ հրատարակվել են նաեւ «Կոմունիստ» (1921) եւ «Բաթումի բանվոր» (1922) թերթերը: Իսկ 1923 թ. հիմնադրվել է Հայ արվեստագետների տունը (Հայարտուն):

Գաղութի պատմության այս համառոտ հիշատակումն էլ բավական է, որպեսզի հասկանալի լինի հայերի շուտափեթի դերը քաղաքի տնտեսության, առեւտրի եւ մշակույթի զարգացման մեջ: Տեղի համայնքն այժմ ազգային ինքնագիտակցության զարթոնք է ապրում: Բաթումի

Բաթումի Հայոց եկեղեցին

հայերը երկար ժամանակ պայքարում էին, որպեսզի հայոց եկեղեցին վերադարձվի իրենց: Բանն այն է, որ 1930-ական թթ. քաղաքի շատ եկեղեցիներ քանդվեցին, սակայն այս շինությունը պահպանվեց եւ վերածվեց մոլորակագուշարանի: Եվ ահա անցյալ տարվա ամռանը քաղաքային իշխանությունները բավարարեցին հայերի խնդրանքը: Դրանից հետո այստեղ տեղավորվեց Աջարիայի «Վերածնունդ» հայոց բարեգործական ընկերությունը: Թվում է, թե այստեղ ոչ մի արտառոց բան չկա, եկեղեցու սեփականատերը համայնքն է եւ այն կարող է տնօրինել այնպես, ինչպես ինքն է ցանկանում:

Սակայն «Մամարքվելոս կարիբճե» («Հրատապ ահազանգ») թերթը (թիվ 2, փետրվար 1993) մեծ աղմուկ է բարձրացրել այս հարցի առնչությամբ: Խմբագրությունը «խիստ անհանգստացած է» մոլորակագուշարանում եղած եզակի արժեք ունեցող գեղանկարչական սարքավորման եւ այդ հիմնարկի աշխատակիցների ճակատագրով: Մինչդեռ այդ ամենը պատրվակ է. նպատակը հայերի շուրջ անբարեհաճ մթնոլորտ ստեղծելն է եւ ազգամիջյան ատելություն սերմանելը: Հետաքրքիր է, ո՞վ է սա ձեռնտու: Կարծում եմ ոչ մեկին:

ՌՈՒԲԵՆ ՉՈՒՐՈՒՅԱՆ
Թղթակից

Գրություն

Գուցե ավելորդ լիներ տպագրել ազնիվ քարերի աշխարհին վերաբերող այս վոքր տեղեկատվությունը, եթե չվերաբերեր հայազգի հմուտ վարդեպին: Լուրը քաղել ենք Լոնդոնում լույս տեսնող «Ալ-Հառաղես» արաբական շաբաթաթերթի ապրիլի 23-ի համարից:

Գոհարեղենի աշխարհում Էդմոն Ավագյանի հաջողությունը վերագրվում է մի քանի գործոնների՝ ձեւավորման բնածին ձիրք, բնական գեղեցկության նրբազգացություն, ծգտող անձնավորություն, փորձարկումներից եւ հնարամտությունից եղկված փորձ եւ բանկարժեք քարերի հանդեպ սեր, որոնք եւ ամրապնդված են բանկարժեք քարերի մասին գիտություն մեջ նրա մասնագիտացմամբ:

Ավագյանը ծնվել է Բուլգարիայի մայրաքաղաք Սոֆիայում: Այսօր նա Բեյրութում ունի գոհարեղենի ներքին լավագույն խանութ եւ մի հիանալի «բուտիկ» ժնեւյան Հիլթոնում:

Էդմոն Ավագյանի հաջողությունը պատճառ դարձավ, որ նա նվաճի «Գրան պրի» մրցանակը, որը նորողական գոհարեղենի պատրաստ գերազանց հաղթանակ է համարվում: Այդ մրցանակը ճանաչման վկայական հանդիսացավ նրա բանկարժեք քարերը բնութագրող յուրահատուկ որակի համար: Նա միշտ նախընտրում է օգտագործել ամենալավ բանկարժեք քարերն ու մետաղները, որոնք մշակում է ստեղծագործական ոճով՝ դրանց առանձնահատկությունների համաձայն: Այդ հաջողությունը հաստատվեց, երբ Ավագյանն իր բանկարժեք զարդերով այցելեց Ժնեւ: Այդ ժամանակ նրանն ուղեկցում էր գովազդային մի մեծ արշավ, որը համընկավ շքեղ գեղջերի եւ միջոցառումների, ինչպես նաեւ Հիլթոնում «բուտիկի» հարմարավետ դիրքի ընտրության հետ, որը կարճ ժամանակում դարձավ այցելավայր պատվիրատու հանճարների եւ բանկարժեք քարերի սիրահար բարձրաճաշակ անձանց համար:

Ցնավորման, ստեղծագործության եւ տարբեր նյութերի հայկաղ մշակման ոլորտներում Ավագյանի հմտության աղյուսը եղան գինեղերի, աղարանցաններ, մատանիների, կրծքազարդերի եւ մանյակների յուրահատուկ ժողովածուներ, որոնք, պատրաստված են պարզունակ եւ նորաձեւ ոճով՝ առօրյա գործածման համար: Միաժամանակ դրանք արտացոլում են պատմական մակարդակի՝ առանց անփութության թույլ տալու որակի եւ մանրամասնությունների նկատմամբ, ինչքան էլ դրանք վոքր լինեն: Այս «մոլեռանդությունը» վերաբերում է նաեւ նրա հետ աշխատող հայ եւ իտալացի արհեստավորներին:

Հաջողությունը Ավագյանին մղեց ընդլայնվելու Ժնեւից դուրս դիմագրավելով տնտեսական լճացմանը: Ավագյանի անկախությունն իրեն հնարավորություն տվեց գործակցել անկայուն շուկայի հետ եւ ստեղծել նոր ժողովածուներ, որոնք գեղարվեստական հայկաղ գործեր են: Սա այն գիտակցության արդյունքն է, որ գոհարեղենի աշխարհում միայն գերազանցությունն է հաջողության բանալին:

«Ալ-Հառաղես»,
23 ապրիլ, 1993

Ավագյանը նվաճում է գոհարեղենի «Մեծ մրցանակը»

digitised by A.R.A.R.@

Ակնարկ

ԴԵՄԻՐԵԼԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

Մոսկվայում լույս տեսնող արտաքին քաղաքական «Նովոյե վրեմյա» շաբաթաթերթը 1993 թ. թիվ 13-ում զետեղել է գրող արեւելագետ Ռադի Ֆիշի հարցազրույցը Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելի հետ, որը խմբագրության կողմից ներկայացվում է որպես «60 միլիոնանոց երկիրը գլխավորող «ճշմարիտ ուղի» կուսակցության գլխավոր նախագահ», «Մարդու իրավունքները պետության իրավունքներից բարձր» վերնագրով:

Ինչը կարող է առավել հետաքրքրել հայ ընթերցողին վերին աստիճանի ուշագրավ այս հարցազրույցում:

Մեր կարծիքով, հետեւյալը.

1. Ջրուցակցի այն հարցին, թե 500-ամյա դիվանագիտական հարաբերություններ ունեցող Ռուսաստանն ու Թուրքիան առնվազն 50 տարի պատերազմել են իրար դեմ, որի հետեւանքով գոյացել են անցյալի նախապաշարմունքներ՝ թուրքերենում «մոսկոֆ», այսինքն «կողոիտ, անտաշ, դաժան մարդ» արտահայտությունը, իսկ ռուսերենում «թուրք» բառը հաճախ արհամարհական երանգ ունի, թուրք վարչապետը պատասխանում է. «Անցյալը գրանցված է պատմության հուշատախտակներին, սակայն ժողովուրդները չեն աղում պատմությամբ, նրանք աղում են ներկայով ու ապագայով: Հարեւանների հետ բընամանը չի կարող օգուտ բերել ոչ մարդկանց, ոչ ժողովուրդներին, ոչ պետություններին: Օգուտ կարող է բերել միայն բարիդրացիական հաղորդակցությունները»:

Որոշ վերապահումով (անցյալի վերաբերյալ) ընդունելով այս զգաստ դատողությունը, անցնենք առաջ: Պարոն Դեմիրելը ճշտում է, որ «այսօր եկել է այն դարաշրջանը, որի գլխավոր բովանդակությունը մարդու իրավունքների եւ համամարդկային, ժողովրդավարական արժեքների պահպանումն է»: Սա արդեն պիտի ընդունել առանց որեւէ վերապահության: Բայց... նրա խոսքերը կարող էին հավաս ներշնչել, եթե դրանք չհակասեին արդեն մեկ ամիս հետո՝ ապրիլին արված նրա սպառնալիքներին հայերի եւ Հայաստանի հասցեին, թե հայ ժողովրդի, տվյալ դեպքում Ղարաբաղի հայերի իրավունքները չեն առնչվում մարդու իրավունքներին: Եւ վերջապես ո՞ւր էր պարոն Դեմիրելը, երբ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում վայրենի ու բիրտ եղանակով խախտվում էին մարդի ջախջախիչ մեծամասնությունը կազմող հայ ազգաբնակչության տարրական իրավունքները, մարդկային եւ ազգային արժանապատվությունը: Չէ՞ որ ամեն ինչ դրանից սկսվեց: Մի՞թե պարոն Դեմիրելն այդ բանը չի հասկանում, չէ՞ որ ինքն էլ է տուժել՝ երեք տարի գտնվելով տնային բանտարկության մեջ: Մի քանի օր առաջ Amnesty International-ը տեղեկացրեց, թե ինչպես են անտեսվում մարդու իրավունքները Թուրքիայում:

2. Թուրք վարչապետը նշում է, որ Ռուսաստանի ու Թուրքիայի ընդհանուր պատմության մեջ միայն բընամանքի ու ատելության սեւ թերթ չեն եղել. «երբ դարասկզբին Օսմանյան կայսրության վերջը հասավ, եվրոպական շատ տերություններ օգտվեցին այդ կործանումից եւ իրենց բաբը դրեցին բուն թուրքական շատ հողերի վրա: Ռուսաստանը մասնակցություն չունեցավ այդ ավերման մեջ, բիկունքից չխփեց սաղմնավորվող թուրքական հանրապետությանը: Իսկ 2-րդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ հիտլերյան Գերմանիան գրավեց Ռուսաստանի հարավը եւ հասավ մինչեւ Ստալինգրադ, Թուրքիան պատշաճանում էր ռուսական բիկունքը եւ հիտլերականներին բաց չթողեց Կովկաս, որ նրանք կարող էին միանալ հյուսիսից հարձակվող իրենց զորքերի հետ: Այնպես որ, մեր ընդհանուր պատմության մեջ կան բաներ, որոնցով մենք կարող ենք հպարտանալ», ավարտում է իր միտքը թուրք վարչապետը:

Որ բոլշեւիկյան ղեկավարները համաշխարհային հեղափոխությունն Արեւելքում տարածելու մոլուցքով տարված չմասնակցեցին Օսմանյան կայսրության բաժանմանը եւ դեռ ավելին՝ ցարական Ռուսաստանի, իսկ այնուհետեւ Հայաստանի Հանրապետության տարածքը կազմող Կարսի մարզը 1921 թ. մարտի 16-ին զիջեցին Թուրքիային, բայց հայտնի է: Սակայն աշխարհին հայտնի չէր Թուրքիայի «ավանդը» ֆաշիզմի դեմ պատերազմում՝ Ռուսաստանի բիկունքն ապահովելու եղանակով: Ճիշտ հակառակը: Հայտնի է, որ Թուրքիան իր «չեզոքությամբ», իսկ իրականում գերմանամետ քաղաքականությամբ ուշացրեց այդ հարձակումը՝ 26 խորհրդային դիվիզիա գամելով Կովկասի սահմանին: Առնվազն անդարկնշտություն է հիշատակել Ստալինգրադը եւ չհիշել այն մասին, որ նրա անկումից հետո թուրքական բանակն անցնելու էր սահմանը: Եւ դժվար չէ ենթադրել, թե ինչ կմնար Հայաստանից:

Սա էլ ասում ենք մեր այն վայ պատգամավորների համար, ովքեր համառորեն հրաժարվում են ուղղել իրենց սխալը եւ վերականգնել նացիզմի ու ֆաշիզմի դեմ ձեռք բերված հաղթանակի եւ դրա համար զոհված բյուրավոր զոհերի հիշատակի օրը որպես տոն:

3. Ջրուցակցի այն հարցին, թե ինչպիսի՞ն է Թուրքիայի դիրքորոշումը նրա շրջապատի (Բալկաններ, Կովկաս, Հյուսիսային Իրաք եւ այլն) բախումների ու պատերազմների վերաբերյալ, պարոն Դեմիրելը հետեւյալ պատասխանն է տալիս. «Ինչպես ռուսական, այնուհետեւ խորհրդային կայսրությունը, այնպես էլ օսմանների կայսրությունը բազմազգ պետություններ էին: Նրանք ցույց տվեցին, որ տարբեր ցեղի, իրավունքի ու լեզվի ժողովուրդները կարող են հաշտ ապրել: Ներկայումս էլ մեր երկրում կան մարդիկ, որոնք պատկանում են էթնիկական ու կրոնական տարբեր խմբերի: Բայց նրանք բոլորը Թուրքիայի քաղաքացիներ են: Քիչ չեն մեր երկրում Կովկասից, Բալկաններից եւ որիշ տեղերից եկվորները: Թուրքիայում ապրում են եւ աբխազներ, եւ վրացիներ: Երբ լուրեր տարածվեցին այն մասին, թե վրացիները ոչնչացնում են աբխազներին, աբխազ ժողովրդի շատ ներկայացուցիչներ նետվեցին թեժ կետը՝ իրենց ցեղակիցներին պաշտպանելու:

Ներկայումս մենք հաճախ ենք հանդիպում այնպիսի խոցուկ նրանության, ինչպիսին փորձ մակարդակի ցեղասպանությունն է՝ միկրոազգությունը: Ժամանակն, անկասկած, ցույց կտա նրա սնանկությունը: Մարդիկ ի վերջո կմիավորվեն ժողովրդավարության ու մարդու իրավունքների սկզբունքների շուրջ, կնասկանան, որ այդ սկզբունքներն ավելի բարձր են, քան ազգերի ու ցեղերի շահերը: Հավատացած եմ կգա ժամանակ, երբ հարկ չի լինի հարցնել, թե ով որ ազգությանն է պատկանում, ինչ կրոն է դավանում»:

Հիրավի, ի՜նչ գեղեցիկ աղագա: Իսկ այժմ՝ անցյալի փառաբանում, եթե դա ձեռնտու է Թուրքիային, եւ անցյալի ժխտում՝ երբ դա ձեռնտու չէ նրան:

Ուշի ես ստիպված եմ կրկնել 1992-ի հուլիսի 21-ին «Հայաստանի Հանրապետիւն» թերթում իմ խոսքերը. փորձենք դրացիական հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ, երբեք չմոռանալով, թե ում հետ գործ ունենք:

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ
Պատմագիտության դոկտոր

Փորձագիտ

Ոչ չի սկսում, նոպատակին չի հասնում

Քրիստոնյաներն ու մահմեդականները բանակցությունների սեղանի շուրջ

Խոստովանենք, մենք շատ բան էինք սպասում այս հանդիպումից, թեեւ հիանալի հասկանում էինք, որ միանգամից ցնցող արդյունքներ չի տալու: Բայց ամեն դեպքում գաղափարը տղավորիչ է: Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ թեեւ կրոնական դրդառաջնաթը նախապես չի հանվում, սակայն այն հաշվի չառնվել չի կարող: Եւ հանանկարային դիմակայության, եւ այն նշանակության առումով, որ այսօր կրոնը խաղում է մեր կյանքում: Ահա թե ինչու այնպես ուզում էի առաջինի հավանականությունից խուսափելու համար փորձել ընդունել հակառակը: Իսկ հասկ կրոնի միջոցով գնալ ոչ թե հնարավոր հակադրության, այլ համախմբման:

Դա հրաշալի ու դժվարամատչելի էր: Թե ինչու՝ սկզբունքորեն հավանաբար հասկանալի է: Իսկ ընդհանուր գծերով ՔԴՄ գաղափարը Հայաստան մուտք գործեց դժվարությամբ: Եւ քրիստոնեա-դեմոկրատների Արեւմտաեվրոպական Ինտերնացիոնալը, եւ մահմեդական դեմոկրատների միջազգային լիգան հիանալի գիտակցում էին, որ դարաբաղյան հարցի լուծման մեջ, որով այսօր զբաղվում են կարծես թե բոլոր քաղաքական ու հասարակական կազմակերպությունները, դժվար է որեւէ նոր բան ասել, որ ավելի լավ է դրա մեջ չխճճվել:

Այդուհանդերձ, ամեն դեպքում «գործընթացը հաստատվել է»: Այդպես ծնվեց «կլոր սեղանի» շուրջ քրիստոնեական ու մահմեդական աշխարհների դեմոկրատների հանդիպման գաղափարը, որին ներկա պետք է գտնվեին Հայաստանի ու Ադրբեջանի ներկայացուցիչները: Բայց... Այս, այդ «բայցը», որ գրեթե սովորական է դարձել, երբ խոսքը նման միջոցառումների մասին է: Այն, ինչպես դժվար չէ գլխի ընկնել, հանգում է ավանդական լարին՝ մեր ընդդիմախոսների կողմից: Առիթ միշտ էլ գտնվում է: Այս դեպքում դա Քելբաջարն էր: Ադրբեջանցիները բնականաբար չեկան: Հանդիպմանը տաղալում էր տղաներում: Սակայն դա ոչ թե ուղղակի հանդիպում, այլ երկխոսության նոր ձեւի սկիզբ դնելու նպատակ ունեցող միջոցառում էր: Ավելին, հենց դարաբաղյան հակամարտությունն էր այն առանցքը, որն արթնացրեց եւ թույլ տվեց, երբ կարելի է այսպես ասել, դավանաբանական դեմոկրատներին վերջապես հավաքվել եւ մտածել, թե ինչ կարող են անել նման իրադրություններում: Ահա թե ինչու գաղով Մոսկվա եւ իմանալով գալիք ճախողման փխրուն երեսի մասին, մենք, իհարկե, «կնցվածք չընդունեցինք»: Մեզ համար գլխավորը ոչ միայն «մեր խնդիրը» հենց սկզբից ուշադրության կենտրոնում պահելն էր, այլեւ այն, որ իրականանար հանդիպման նախագիծը հնարավորություն ընձեռնելով հաջորդ ձեռնարկումների համար, եւ այն ժամանակ...

Մեջբերեմ մոսկովյան երկխոսությունը բնութագրող երկու արտահայտություն: Էնտոնի դե Մենուս, ՔԴ Արեւմտաեվրոպական Ինտերնացիոնալի քարտուղար. «ՌՔԴՄ-ի, Ինտերնացիոնալի, Իսլամական համաշխարհային լիգայի եւ Քրիստոնեա-դեմոկրատական ու մահմեդական դեմոկրատական կուսակցության Ֆիլիպինյան միավորման մշտական համակարգողով: Որոշ ժամանակ անց նրանք կհանդիպեն, որպեսզի հասակ առաջարկություններով պատրաստեն հաջորդ պաշտոնական հանդիպման օրակարգը: Աշխատանքը տարվելու է երկու հիմնական ուղղություններով: Առաջինը՝ հակամարտության գոտիների փորձի ուսումնասիրությունը... Առաջին հերթին Ղարաբաղի, քանի որ բոլոր կողմերն ընդգծեցին, որ այդ հակամարտությունը վերաբերում է ոչ միայն Հայաստանին, Ադրբեջանին ու Ղարաբաղին: Դա ողջ շրջանը թունավորելու ընդունակ բարախառալալար է: Չեմ վախենում ասել, որ աղագա բոլոր քննարկվելիք խնդիրների մեջ բոլորս խոստովանեցինք դրա առաջնությունը: Ուրիշ շատերը կան, բայց սա անկասկած առաջնահերթ է: Այժմյան նիստում այն չքննարկվեց միայն նրա համար, որ հակամարտող կողմերը ներկայացված չէին: Սակայն հնարավորում, չեմ կասկածում, նրանց միջեւ երկխոսության ձեւը կգտնվի: Երկրորդը մեր ուղղությունն է՝ նոպատակ հնարավորին չափով խաղաղության կայունացման եւ միմյանց հետ համագործակցելու պատրաստակամության մթնոլորտի հաստատումը: Ամենակարեւորը դասակարգ խոսքեր չեղան: Հասակ որոշում ընդունվեց ստեղծել առայժմ ոչ պաշտոնական քարտուղարություն՝ յուրաքանչյուր երկրից մեկական անդամ՝ հանդիպումը հաստատեց նրանց՝ հնարավորին չափով խաղաղության կայունացման եւ միմյանց հետ համագործակցելու պատրաստակամության մթնոլորտի հաստատումը: Ամենակարեւորը՝ դասակարգ խոսքեր չեղան: Հասակ որոշում ընդունվեց ստեղծել առայժմ ոչ պաշտոնական քարտուղարություն՝ յուրաքանչյուր երկրից մեկական անդամ՝ հանդիպումը հաստատեց նրանց՝ հնարավորին չափով խաղաղության կայունացման եւ միմյանց հետ համագործակցելու պատրաստակամության մթնոլորտի հաստատումը: Ամենակարեւորը՝ դասակարգ խոսքեր չեղան: Հասակ որոշում ընդունվեց ստեղծել առայժմ ոչ պաշտոնական քարտուղարություն՝ յուրաքանչյուր երկրից մեկական անդամ՝ հանդիպումը հաստատեց նրանց՝ հնարավորին չափով խաղաղության կայունացման եւ միմյանց հետ համագործակցելու պատրաստակամության մթնոլորտի հաստատումը: Ամենակարեւորը՝ դասակարգ խոսքեր չեղան: Հասակ որոշում ընդունվեց ստեղծել առայժմ ոչ պաշտոնական քարտուղարություն՝ յուրաքանչյուր երկրից մեկական անդամ՝ հանդիպումը հաստատեց նրանց՝ հնարավորին չափով խաղաղության կայունացման եւ միմյանց հետ համագործակցելու պատրաստակամության մթնոլորտի հաստատումը: Ամենակարեւորը՝ դասակարգ խոսքեր չեղան: Հասակ որոշում ընդունվեց ստեղծել առայժմ ոչ պաշտոնական քարտուղարություն՝ յուրաքանչյուր երկրից մեկական անդամ՝

Պատերազմ

Պատանդների եւ ռազմագերիների վիճակի մասին

Նոյյան տարան գործակալության թղթակցի հարցերին պատասխանում է ԼՂՀ ներին գործող նախարարի առաջին տեղակալ, պատանդների, ռազմագերիների եւ անհետ կորածների հարցերի հանձնաժողովի նախագահ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՂԱՍԱՐՅԱՆԸ

- Պրն Աղասարյան, ասացեք խնդրեմ, դուք ինչ տեղեկություններ ունեք ադրբեջանական հանրապետությունում գտնվող հայ պատանդների ճակատագրի մասին:

- Ադրբեջանում նույնպես գոյություն ունի պատանդների, ռազմագերիների եւ անհետ կորածների հարցերի հանձնաժողով, որի նախագահն է այդ հանրապետության ազգային անվտանգության փոխնախարար Նամիկ Աբասովը: «Իզվեստիա» թերթում հրապարակված հարցազրույցում Ն. Աբասովը հայտնել է, որ պատանդ վերցված բոլոր հայերը պահվում են Քոչիսան վայրում, Բաքվի մոտակայքում:

- Ադրբեջանական կողմը պատանդների եւ ռազմագերիների փոխանակման փորձեր անո՞ւմ է արդյոք:

- Մեր բազմաթիվ փորձերից հետո 1993 թ. ապրիլի 26-ին մեզ հաջողվեց ադրբեջանական կողմի հետ հանդիպում ունենալ Ֆիզուլու շրջանի Գովշաթլու եւ Զարգյար գյուղերի միջեւ: Հանդիպումն կայացավ Ֆիզուլու շրջանի գլխավոր գործակալի ղեկավարի տեղակալ, պատանդների, ռազմագերիների եւ անհետ կորածների հարցերի հանրապետական հանձնաժողովի անդամ Թեյրան Հաջիեւի եւ Հելսինկյան խմբագրական հանձնաժողովի անդամ Սեյրան Ախսադի հետ: Մենք նրանց հանձնեցինք մեր պատանդների եւ ռազմագերիների ցուցակները՝ նրանց գտնվելու վայրի հետագա ստուգման համար: Ադրբեջանցիների ցուցակները մեզ մոտ են: Ճշգրտվում են փոխանակման մեխանիզմի որոշ մանրամասնություններ: Ադրբեջանական կողմը նշել է հանդիպման վայրը, սակայն նրանց առաջարկած փոխանակման մեխանիզմը մեզ ձեռնտու չէ, քանի որ նրանք առաջարկում են մասնավոր փոխանակում, որի հետեւանքով մարդկանց գնում ու վերավաճառում են մի քանի անգամ: Օրինակ, ապրիլի 24-ին փոխանակված Մարտակերտի շրջանի Չայլու գյուղի բնակիչ, 6 անչափահաս երեխաների հայր, 1949 թ. ծնված Բահադուր Պասպանյանը 10 ամսվա ընթացքում երեք անգամ վերավաճառվել է: Բացի դրանից, այդ մեխանիզմը հանգեցնում է այն բանին, որ պատանդ վերցվեն հակամարտության գոտուց չբնակվող եւ դրան բնավ չառնչվող մարդիկ: Այդ պատճառով մեր կողմն առաջարկեց պատանդների ու ռազմագերիների փոխանակման մեր տարբերակը:

1. Ներկայացնել Ադրբեջանի տարածքում գտնվող բոլոր պատանդների ու ռազմագերիների ցուցակները, նշելով նրանց տվյալները եւ գտնվելու վայրը, որից հետո հաշվի առնելով սեռը, տարիքը եւ պատանդ վերցվելու կամ գերի ընկնելու հանգամանքները, փոխանակում կկատարվի ըստ գոյական տարբերակի:

2. Նկատի ունենալով, որ ըստ Հաջիեւի խոսքերի, հանրապետության բոլոր շրջաններում առկա են համանման հանձնաժողովներ, հարկավոր է հասնել պատանդների ու ռազմագերիների կենտրոնացված պահմանը, որը պետական հանձնաժողովի վերահսկողությամբ կիրականացնի մասնավոր անձանց մոտ նրանց մնալը թույլ չտալու նպատակով:

3. Պետք է բացառվեն պատանդ վերցնելու փաստերը հակամարտության գոտու սահմաններից դուրս:

4. ԼՂՀ պետական հանձնաժողովը պատրաստ է որեւէ պահի եւ որեւէ տեղում հանդիպում ունենալ նրանց կողմից այս երեք պայմանների կատարման դեպքում, ինչպես նաեւ քննարկել եւ ընդունել հակառակ կողմի պայմանները, եթե դրանք կնպաստեն ճիշտ եւ արագ փոխանակմանը:

- Ադրբեջանական բանակի ռազմագերիների մեջ կա՞ն արդյոք ոչ ադրբեջանական ազգության անձինք:

- ԼՂՀ տարածքում գտնվող ռազմագերիների մեջ կան նաեւ ռուսներ, ուկրաինացիներ, լեզգիներ եւ հրեաներ:

- Ի՞նչ պայմաններում են պահվում ադրբեջանցի պատանդները:

- Պայմանները միանգամայն բավարար են: Նրանք սնվում են երեք անգամ: Բոլոր հիվանդներին եւ վիրավորներին ցույց է տրվում բուժօգնություն, ընդհուպ մինչեւ վիրահատական միջամտությունը: ԼՏ

Հանդիպում

Մ. Սարգսյան. «ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆՈՒՆԻՑ ՄԻԱՅՆ ՂԱՐԱԲԱՂԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՍԵԼ»

Լրացավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հայաստանում բացված առաջին ներկայացուցչության մեկ տարին: Մշտական ներկայացուցիչ Մանվել Սարգսյանը իր գործունեության սկզբից ելնելով ցանաց այն դարձնել գործուն եւ համակարգող օղակ: Վերջերս նա մեկնեց Ղարաբաղ հաշվետվություն տալու մեկ տարվա ընթացքում կատարած աշխատանքների մասին: Ինչպիսի հաջողվեց նրան համակարգել, ինչպիսի փոփոխություններ արձանագրվեցին Հայաստան-ԼՂՀ հարաբերություններում, ինչպես են ԼՂՀ իշխանությունները վերաբերվում միջազգային միջնորդություններին եւ նրանց որոշումներին: Այդ մասին է մեր թղթակցի զրույցը ներկայացուցչի հետ:

– Մեկ տարի է Հայաստանում ներկայացնում եք ոչ մի պետության կողմից չճանաչված հանրապետություն: Նման պայմաններում ինչքանով արդարացվեց ներկայացուցչության բացումը կամ, այլ կերպ ասած, ինչի՞ հասաք:

– Հայաստանում Լեռնային Ղարաբաղի ներկայացուցչությունը տարբերվում է ներկայացուցչությունների մասին մեր ունեցած ընդհանուր պատկերացումներից: Այն կառված է մեր շարժման էությանը: Դուք գիտեք, թե ինչ ազդեցություն ունի Ղարաբաղի խնդիրը Հայաստանի քաղաքական կյանքում: Այդ տեսակետից մեր ներկայացուցչությունը պետք է համակարգողի դեր խաղա: Սա էր իմաստը, երբ իշխանության եկած նոր ուժերը հիմնեցին մեր ներկայացուցչությունը. տալով միայն քաղաքական լիազորություններ: Եւ մինչեւ հիմա էլ ես զբաղվում եմ միայն քաղաքական հարցերով: Իմ աշխատանքն առաջացրեց, թե ինչ մեծ դեր կարող է խաղալ ներկայացուցիչը, անկախ նրանից ես եմ, թե մեկ ուրիշը: Հարցն այն էր, որ Լեռնային Ղարաբաղի մի քանի տարվա անիշխանության պայմաններում դեռեւս անհայտ էր եւ Ղարաբաղի կարգավիճակը, եւ ժողովրդի պայքարի կարգավիճակը, չկար հասկ որոշում, թե ո՞վ կարող է տարբեր այսաններում Ղարաբաղի վերջնական քաղաքական դիրքը ներկայացնել: Դուք ծանոթ եք դեղերի, երբ Գերագույն խորհրդում կամ այլ տեղ մի պատահական դարաբաղցու կամ մի պատգամավորի, կամ մի ինչ-որ միտինգային պրոլուիսի կարծիքով անմիջապես որոշումներ էին ընդունվում: Ամեն մի քաղաքական ուժ օգտագործում էր նման առանձին կարծիքը որպես Ղարաբաղի կարծիք: Երբ հասասվեց հանրապետությունը, ստեղծվեց հասկ իշխանություն՝ Գերագույն խորհուրդ եւ կառավարություն, հնարավորություն ընձեռվեց Հայաստանում ունենալ պատասխանական ձայն: Մեր սկզբունքներից մեկն այն էր, որ թույլ չտրվի, որպեսզի Ղարաբաղի հարցը դառնա շահարկման առարկա: Երկրորդն այն է, որ Հայաստանի ներքին քաղաքական կյանքին չմիջամտեմ: Մենք պահպանում ենք եւ մինչեւ վերջ կոչահպանենք մոտեցումը, ինչը մեր կարծիքով առողջ մթնոլորտ կստեղծի թե Հայաստանի ներքին քաղաքական կյանքում եւ թե Հայաստան-ԼՂՀ փոխհարաբերություններում: Միայն թե պետք է, որ Հայաստանն էլ մեզ վերաբերի ոչ թե որպես տարածքի, այլ պետության: Մենք կարողացանք կենտրոնացնել եւ մենաշնորհել ԼՂՀ միջազգային գրագրությունը: Այդ ընթացքում որեւէ պատասխանատվություն չկար եւ անգամ գաղտնի նամակները փոխանցվում էին միջնորդների միջոցով, որոնք հաճախ իրենք էին քաղաքականություն թելադրում: Այժմ բոլոր միջազգային այսաններից եւ տարբեր երկրների դեսպանատներից մենք անմիջապես ստանում ենք նամակներ եւ ուղարկում Ստեփանակերտ: Այստեղ կարեւորվում է նաեւ այն փաստը, որ այցելելով Հայաստան, շատ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ ու քաղաքական դեմքեր այցելում են մեզ, ցանկանում իմանալ Ղարաբաղի կարծիքը: Ու թեեւ իրավաբանորեն ճանաչված չենք, բայց գործնականում բոլորն օգտվում են մեր ծառայություններից: Այժմ նրանց համար շահավետ է օգտվելը: Միգուցե կգա այն պահը, երբ շահավետ կդառնա նաեւ մեզ ճանաչելը:

– Միջազգային տարբեր այսաններում Ղարաբաղի հարցը դարձել է շահարկման առարկա: Եւ երբ Հայաստանն արդեն մտել է մեծ տերությունների խաղերի մեջ, արդյոք Ղարաբաղը դեռեւս պայքարում է այդ խաղերի լիիրավ մասնակիցը դառնալու համար: Որքանով է երաշխավորված, որ դուք մտնելով գերտերությունների խաղերի մեջ, կհասնեք ձեր նպատակին:

– Մեր սկզբունքը մնում է նույնը: Ղարաբաղի անունից միայն Ղարաբաղը կարող է խոսել: Որովհետեւ մենք ենք մեր տարածքում կռվում եւ մենք էլ պետք է մեզ պաշտպանենք բոլոր դիվանագիտական այսաններում: Հայաստանի իշխանությունները եւս որեւէ պատասխանատվություն չեն կրում ղարաբաղցիների արածի համար եւ պարզ է, որ խրավունք չունեն Ղարաբաղը ներկայացնել որեւէ տեղ, երբ ԼՂՀ-ն դա չի խնդրում: Մենք բանից հայտնել ենք Հայաստանի պաշտոնյաներին, որ այդ հարցում պետք է սկզբունքային լինել, բայց բանի որ Հայաստանը գտնվում է ծանր վիճակում, երբեմն ստիպված է լինում արծարծել նաեւ մեր հարցն այն այսաններում, որտեղ մենք չկամ: Կյանքը ցույց է տվել, որ դա ոչ մի արդյունք էլ չի տալիս: Ավելին, Ադրբեջանի կողմից վերջերս տարբեր միջազգային այսանների միջոցով փորձ է արվում լուծել քաղաքական եւ ռազմական զանազան հարցեր, մինչեւ անգամ պահանջելով ազատել ինչ-որ տարածքներ: Քելբաջարը, որն արյան գնով ազատվեց, Ադրբեջանը ձգտում է այդ նույն միջազգային կազմակերպությունների միջոցով ետ վերցնել: Սա է, որ անընդունելի է մեզ համար: Մենք Ադրբեջանին բազմիցս դիմել ենք, որ եթե կան հարցեր, արդյոք կարող ենք իրար հետ պարզել, որովհետեւ մենք ենք կռվում, այլ ոչ թե Հայաստանի բանակը: Ղարաբաղի բանակը կազմված է միայն ղարաբաղցիներից, այսինքն դժվար է անգամ պարզել, թե որտեղ է այն սկսվում եւ որտեղ վերջանում: Որովհետեւ այդ բանակը ողջ ազգն է, մեծից մինչեւ փոքր: Ուստի Ղարաբաղի բանակը ոչ մի կերպ չի կարող հաշվի նստել Հայաստանի կարծիքի հետ, էլ չեմ ասում ուրիշների, երբ այդ կարծիքը ինչ-որ տեղ հակասում է Ղարաբաղի շահերին: Աշխարհում ոչ մի տեղ ոչ ոք չի կարող հայտարարել, թե ինքը վերահսկում է Ղարաբաղի զինված ուժերը: Որովհետեւ դա մի չճանաչված տարածք է, որտեղ ժողովուրդն ինքն է կրում իրադրության ողջ պատասխանատվությունը: Անցյալ տարվա մեծ կորուստներից հետո, երբ Հայաստանի իշխանությունները ողջ պատասխանատվությունը բարդեցին Ղարաբաղի ղեկավարության վրա, ղարաբաղցիները հասկացան, որ ոչ մի քաղաքական ուժ չի կարող ԼՂՀ-ից դուրս պատասխանատվություն կրել ղարաբաղցիների արածի կամ պայքարի համար: Կարող են միայն օգնել: Այդ տեսակետից մեր բանակը ղարաբաղյան է, եւ անհնարաս են բոլոր այն խոսակցությունները, թե մենք ինչ-որ տեղից զենք ենք ստանում: Աշխարհի բոլոր բանակներն էլ ինչ-որ տեղից զենք են ստանում, բայց դա չի նշանակում, թե նրանք զենքը մասնակարողների բանակն են: Հետեւաբար միայն մենք կարող ենք միջազգային այսաններում խոսել մեր մասին ու որոշումներ կայացնել: Բայց բանի որ Ադրբեջանը հաշվի չի առնում մեզ, անընդհատ փորձում է ներքաշել Հայաստանին, դրա համար էլ մենք հրաժարվում ենք մասնակցել:

Անընդունելի է նաեւ միջազգային կազմակերպությունների դիրքորոշումը, ըստ որի Ղարաբաղը համարվում է Ադրբեջանի տարածք, մինչդեռ նրանք ասում են, թե դուք ձեր տարածքից մտել եք Ադրբեջան: Այդ դեպքում ի՞նչ տարբերություն, թե Ադրբեջանի որ մասում են զորքերը կամ թե ինչպես են տեղափոխվում: Փաստորեն միջազգային այսաններն իրենք իրենց հակասում են եւ դրանից էլ ոչ մի երկխոսություն չի ստացվում:

– Բայց չէ՞ որ անկախ ամեն ինչից, Ղարաբաղի հետեւում շարունակվում են բարձր կարգի բանակցություններ: Եւ՝ եթե ձեզ բերվեն պայմանավորվածություններ, Ղարաբաղը կկարողանա՞ դիմագրավել դրանց:

– Նախ Հայաստանի նախագահը երբեւէ պատասխանատվություն չի վերցրել Ղարաբաղում կատարվող իրադարձությունների համար: Ուստի նա որեւէ որոշում չի կարող կայացնել Ղարաբաղի մասին: Եւ երբ կա մի լուծում, որին Ղարաբաղը մասնակից չէ, արդյոք դա դատնում է անիմաստ:

– Այդ դեպքում ինչպե՞ս եք պատկերացնում Ղարաբաղի եւ Ադրբեջանի հարաբերությունների զարգացումը:

– Մեր հարաբերությունները Ադրբեջանի հետ ավելի պարզ են, քան Հայաստանի: Նրանք իրենց բանակով են կռվում, մենք՝ մեր: Պետական մակարդակով նրանք ոչ մի հարաբերության մեջ չեն ցանկանում մտնել, թեեւ մենք միշտ էլ հայտարարել ենք նման հարաբերություններ հաստատելու մեր պատրաստակամության մասին: Դա է ճիշտ ուղին: Ցավոք, Ադրբեջանում չկա քաղաքական մի ուժ, որը գիտակցի, որ պետք չէ դրսում փնտրել ինչ-որ ուժերի:

– Դուք նշում եք, թե առանց Ղարաբաղի ոչ ոք չի կարող որոշում ընդունել: Բայց Քելբաջարի դեպքերից հետո միջազգային հանրությունն սկսեց ավելի շատ ճնշում գործադրել Հայաստանի վրա, քան Ղարաբաղի: Նման դեպքում չե՞ք կարծում, որ միայն երկու հանրապետությունների համաձայնությունը դիվանագիտական քայլերը կարող են տալ դրական արդյունք:

– Ճիշտ եք ասում: Մենք այդպես էլ անում ենք: Մեր կարծիքն այն է, որ եթե երկու ուժ ճիշտ համագործակցեն, շատ ավելի ուժեղ կլինի եւ այս ծանր վիճակից դուրս կգան միասին: Մենք լավ գիտակցում ենք, թե ինչ ծանր տառապանքներ է կրում Հայաստանի ժողովուրդը եւ դարաբաղցիները փորձում են ամեն կերպ թեթեւացնել այդ ծանրությունը: Այդ տեսակետից մենք միասնական ենք եւ թույլ չենք տա, որ հայ ժողովուրդը տուժի անհասկանալի հարաբերություններից:

– Բայց եթե ադրբեջանցիները չեն ցանկանում ձեզ հետ բանակցել, արդյոք մինչեւ ե՞րբ կարող եք դիմակայել: Ո՞րն է ելքը:

– Ելքն այն է, որ մենք մեր էությամբ եւ քաղաքական վարկով կարողանանք Ադրբեջանին կամաց-կամաց համոզել, որ իր համար էլ ձեռնտու է մեզ հետ հաշվի նստելը. քան չնստելը: Ադրբեջանը քանի դեռ օգուտ ունի այդ հարցից, հաշվի չի նստի, բայց երբ զգա, որ այլեւս անշահավետ ու անօգուտ է նման ձեւով շարունակելը, նա անպայման հաշվի կնստի: Կարեւորն այն է, որ Հայաստանը չխառնվի կռվին, ինչն ամեն կերպ ձգտում է իրականացնել Ադրբեջանը: Հայաստանի կողմից մենք ասենք Ղարաբաղի հարցը հանել օրակարգից: Ինչքան Հայաստանը հեռու մնա Ադրբեջանի հետ կապածելի հարաբերություններից, այնքան կշահեն եւ Հայաստանը, եւ Ղարաբաղը:

– Սակայն Հայաստանի շրջափակումը կապված է Ղարաբաղի հարցի եւ հենց Ադրբեջանի հետ: Դա մի եռանկյունի է, որից Հայաստանը չի կարող դուրս գալ, առանց շոշափելու Ղարաբաղի հարցը կամ հրաժարվելով դիվանագիտական հարաբերություններից:

– Հայաստանը մինչեւ հիմա ամեն ինչ արեց, որպեսզի չմտնի այդ պատերազմի մեջ եւ դա ճիշտ էր: Դիվանագիտական պորտում ձգտեց ներկայացնել նաեւ Ղարաբաղին, թեեւ ոչ միշտ սկզբունքային դիրքերից: Այսինքն այն միջազգային այսաններում, որտեղ Ադրբեջանը կցանկանար տեսնել Հայաստանը այլ ոչ թե Ղարաբաղը, նա չպետք է լիներ: Ադրբեջանցիները սխալված կլինեին խոսել Ղարաբաղի հետ:

Հարցազրույցը վարեց
ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆԸ

Տարեդարձ

Ակադեմիկոս Արամի Բաբայանի հիշատակին

Մայիսի 5-ին լրացավ Արամի Բաբայանի ծննդյան 87 տարին: Նա այլեւս մեզ հետ չէ, դադարել է բաբախելուց գիտության մեծ մշակի սիրտը: 93-ի գրաբուն ձմեռը խլեց Արամու կյանքը, առաջին եւ դեռեւս միակ կին ակադեմիկոսի, որն իր կյանքը նվիրաբերեց հայրենիքին, ժողովրդին, հիմնային:

Արամի Բաբայանը ոգեւորված էր 88-ով, ելույթ էր ունենում Ազատության հրապարակում, կոչ էր անում փրկել Արցախը: «Մանուկը պիտի մոր գրկում լինի», եզրափակեց իր հայտնի ելույթը Ազատության հրապարակում: Կորցրած տեսողությունը եւ մասամբ լսողությունը, ամբողջ օրը գամված փորիկ ռադիոընդունիչին, հետեւում էր հայոց խորհրդարանի աշխատանքներին, կլանված լսում հանրապետության նախագահին եւ սպասում էր...

Մեծ է Արամի Բաբայանի դերը հայկական քիմիայի զարգացման գործում: Հայտնաբերել է հետաքրքիր ռեակցիաներ, որոնք մտել են «Քիմիայի ավանդական ռեակցիաներ» տարեգիրք, տեսական եւ գործնական նշանակություն ունեցող պրոցեսներ: Միայն միջֆազային կատալիզի հայտնաբերումը կարող էր դառնալ որեւէ խոշոր գիտնականի կյանքի ուղենիշ: Սակայն Բաբայանը շարունակում էր հայտնագործել: Մենք [illegible] իրավունք ունենք հպարտանալու, որ [illegible] շաս մեծամեծների շարքում կա եւ [illegible] նա խոշորագույն կին գիտնականը, խոշորագույն քիմիկոսը:

Ա. Բաբայանը ծնվել է Երեւանում, 1906 թ. մայիսի 5-ին, փայտագործ կահույքագործի ընտանիքում: Վաղ հասակում զրկվել է հորից, ընտանիքի հոգսը տարել, ճանգի տան մեծն էր: 1928-ին ավարտել է Երեւանի պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը, արդյոք սովորել եւ ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիկա-տեխնոլոգիական ֆակուլտետը: 1937-ին, արդյոք 1945-ին հաջորդաբար պաշտպանել է թեկնածուական, դոկտորական դիսերտացիաներ: 1956-ին ընտրվել է հանրապետության ԳԱ թղթակից անդամ, 1968-ից՝ իսկական անդամ: Երկար տարիներ ղեկավարել է Երեւանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի օրգանական քիմիայի ամբիոնը, դասավանդել հանրապետության շատ բուհերում: Ստեղծել եւ շուրջ 40 տարի ղեկավարել է ամինաթթուների լաբորատորիան՝ 77 օրգանական քիմիայի ինստիտուտում: Այդ տարիներին կրթել եւ դաստիարակել է ուսանողների մի սվար բանակ, կյանքի եւ աշխատանքային ուղեգիր տվել 7 գիտության դոկտորների եւ 60-ից ավելի թեկնածուների: Արդեն տեսողությունը կորցրած եւ կարծես անօգնական՝ շարունակում էր մտածել, ֆորմուլաներ հնարել եւ պատրաստվում էր նոր գիրք գրել: Նրա ներկայությունը ոգեւորում էր աշակերտներին, կյանքի եւ աշխատանքի կոչ էր անում հայրենիքը ծառայությունից հանելու համար:

Դաժան կյանքը չէր սպանել նրա կանացիությունը, գիտության տատասկոտ ճանապարհին ունեցել է 3 զավակ: Գիտեր հարգել իր ուսուցչին՝ Ստեփան Դանիելյանին, հայկական քիմիայի հիմնադրին: «Ժողովրդի բնանին» դուրս էր հանվել իր բազմաթիվ աշակերտների մտից, բայց ոչ Արամու, որը դիմավորեց բանից եկած ուսուցչին, իսկ մինչեւ վերջերս կազմակերպում էր «Դանիելյանական ընթերցումներ»:

Արամի Բաբայանի վերջին գիտական ելույթը եղավ իր 85-ամյակին հրավիրված միջազգային համաժողովում՝ Երեւանում, 1991-ին: Դողդոջուն ձայնով զեկուցեց՝ խստաքեսը հանձնելով աշակերտներին:

ԳԱԳԻԿ ՅՈՐՈՍՅԱՆ,
ՍԵՐԳԵՅ ՊԱՌԱՎԵՅԱՆ

Իրադարձություն

ՆԳՆ աշխատակիցները կոչ են անում կաշառակերության համար

Ինչպես հայտնի դարձավ Նոյյան տաղան գործակալությանը ՀՀ ՆԳՆ լրատվական կենտրոնից, ՆԳՆ նարկոտիզնեսի եւ թմրամոլության դեմ պայքարի վարչության աշխատակիցները, իրականացնելով օպերատիվ տվյալներ, ապրիլի 5-ին, ժամը 16.10 Երեւանի Շենգավիթի ՆԳ բաժնի մոտ ձերբակալել են նույն բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ավագ օպերլիազոր, միլիցիայի ավագ լեյտենանտ Արթուր Շուրայի Մուկոյանին ծանր հանցագործություն կատարելուց՝ քաղաքացուց կաշառք վերցնելուց անմիջապես հետո, իրեն առկայությամբ: Մուկոյանը նշված գումարի դիմաց քաղաքացուն խոստացել էր նրա նկատմամբ գործ չհարուցել, կոծկել «հանցագործությունը»:

Ինչպես հայտնեցին ՆԳՆ լրատվության կենտրոնից, վերջին շրջանում ՆԳ նախարարությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում համակարգում տեղ գտած արատավոր երեւույթների դեմ պայքարող պայքարին: Այսպես, սա արդեն երրորդ դեպքն է այս տարվա ընթացքում, երբ ՆԳՆ 4-րդ վարչության աշխատակիցները ձերբակալում են ՆԳ մարմինների աշխատակցի կաշառակերության համար: Հաշվի առնելով կաշառակերության հանրային վտանգավորության աստիճանը, նախարարությունն առաջիկայում եւս կշարունակի իր շարքերում հայտնված «պատահական» մարդկանցից ձերբազատվելու գործը: Գործի կարգակցությամբ ստեղծված բոլոր նյութերը 4-րդ վարչության կողմից հանձնված են հանրապետության դատախազությունը:

ՆՏ

Տարեդարձ

Հարգելի հանդիսատես

Մայիսի 16-ին, ժ. 14.00-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա հոգեհանգստյան համերգ՝ նվիրված մեծ բարեկամ Մարի Մանուկյանի հիշատակին

Մասնակցում են Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբը, Ազգային օպերայի արական երգչախումբը

Համերգը ղեկավարում է գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Լորիս Ճգնավորյանը

Մուտքն ազատ է

digitised by A.R.A.R.@

Աշխարհ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳ

Արեւելյան բլոկի փլուզումից եւ աշխարհի միաբեւեռ դառնալուց հետո միջազգային հարաբերություններում եւ հատկապես զարգացած երկրների, ինչպես նաեւ զարգացող երկրների փոխհարաբերություններում նոր փոփոխություններ առաջացան: Ուշադիր հետեւելով տեղի ունեցած իրադարձությունների ընթացքին, թվում է զարգացած երկրները մարդու իրավունքների հովանավորության եւ խաղաղության պաշտպանության պատրվակով շարունակաբար գաղութատիրական նոր հարաբերություններ են պարտադրում երրորդ աշխարհի երկրներին:

Ոչ հեռու անցյալում զարգացող երկրների դեկավարները, հաշվի առնելով իրենց կախվածության աստիճանը գերուժերից, բերեւս սահմանափակ, սակայն որոշ չափով երկիրն անկախ դեկավարելու հնարավորություն ունեին, եւ ազգային ինքնիշխանության իրավունքը միջազգային հարգված սկզբունքներից էր համարվում: Այսօր այդ սկզբունքը հասարակական դատողության մեջ իր նախկին նշանակությունն այլեւս չունի եւ դրա փոխարեն կարեւորվում է մարդու իրավունքների պաշտպանությունը: Այդ սկզբունքների կարեւորության պարտում տեղի ունեցած փոփոխությունը Արեւմտյան բարգաչական մեքենայի աշխատանքի արդյունքն է զանգվածային լրատվական միջոցների օգնությամբ, որի նպատակը զարգացած երկրների ռազմական միջամտությունը երրորդ աշխարհի փոքր երկրների ներքին գործերին ինչ-որ ձեւով օրինականացնելն էր: ԱՄՆ ռազմական միջամտությունը 60-70-ական թվականներին Վիետնամում եւ Լաոսում ոչ միայն աշխարհի մամավորականության կողմից, այլեւ աշխարհի շատ երկրների ժողովուրդների կողմից խիստ քննադատության ենթարկվեց: Այսօր ԱՄՆ քաղաքականությունը փոքր երկրների ներքին գործերին ռազմական միջամտություն կատարելու ուղղությամբ նկատելի հաջողություններ է հասել իր կողմը գրավելով ոչ միայն ամերիկացիների մեծամասնությանը, այլ նաեւ որիշ երկրների ժողովուրդներին:

Օրինակ, նախքան ամերիկյան զինվորների Սոմալի ուղարկվելը արեւմտյան բարգաչական մեքենան համաշխարհային հասարակության կարծիքը Սոմալիում ընդհարվող կողմերին դատապարտելու համար լիովին նախապատրաստել էր: Լրատվական տեսաժապավենները հստակորեն ցուցադրում էին Սոմալիի սովի զոհերի նիհարած եւ մահամերձ դեմքերը, առյա երկրի անկայունությունն ու անապահովությունը մարդասիրական օգնությունը սովյալներին հասցնելու ճանապարհին գլխավոր արգելքն է հայտարարում: Նման պայմաններում անվտանգությունն ապահովելու եւ մարդասիրական օգնությունը սովյալներին հասցնելու նպատակով արտաքին ուժերի միջամտության կարիքն անհրաժեշտ էր թվում: Այդ էր պատճառը, որ աշխարհի հասարակական կարծիքը ցանկանում էր ժամ առաջ ՄԱԿ-ի կամ ավելի ճիշտ ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների ռազմական միջամտությունը, որպեսզի վերջ դրվեր այդ երկրի բնակչության տառապանքներին եւ դժվարություններին:

Իհարկե, չպետք է մոռանալ, որ իրականությունն այդ երկրում զանգվածային լրատվական միջոցների ներկայացրածից շատ չէր տարբերվում: Սակայն խորհելու տեղիք է տալիս այն փաստը, որ սովյալ երկրների մեջ Սոմալին է ընտրվում ռազմական միջամտության համար, բեւ Աֆրիկայում քաղաքացիական պատերազմի հետեւանքով սովահար եւ երաշտահար այլ երկրներ էլ կան, օրինակ, Սուդանը եւ Մոզամբիկը: Սակայն քանի որ այդ երկրներ չունեն Սոմալիի աշխարհագրական դիրքը եւ ռազմավարական նշանակությունը, ԱՄՆ-ը եւ իր դաշնակիցները ցանկություն չեն ցուցաբերում այդ երկրներում ռազմական միջամտությամբ կարգ ու կանոն հաստատել, որպեսզի մարդասիրական օգնությունների բաշխման համար նպաստավոր պայմաններ ստեղծվեն:

Այսօր էլ զանգվածային լրատվական միջոցներ սերբերի ոճրագործությունների մասին են խոսում եւ ցուցադրում են Բոսնիա-Հերցեգովինայում կատարվող անմարդկային արարքները, օրինակ, անգեն մարդկանց զանգվածային կոտորած, բռնություններ պատերազմող կողմերի եւ բնակավայրերի ռմբակոծում, կանանց պարբերաբար բռնաբարում, մարդկանց հարազատ բնակավայրերից տեղահանում եւ այլն: Այս ամենը պայմաններ է ստեղծել, որպեսզի հասարակական կարծիքն արտաքին ուժերի ռազմական միջամտություն պահանջի այդ ոճրագործություններին վերջ դնելու հարցում: Միեւնույն ժամանակ այստեղ խիստ ուշագրավ է մի այլ հանգամանք, մյուս երկրներ չեն ցանկանում ռազմական միջամտություն այլ երկրի բնակչության իրավունքները պաշտպանելիս:

Ներկա դրությամբ ՄԱԿ-ի զինված ուժերը սահմանափակ ակտիվությամբ միայն սենդամբերք եւ դեղորայք են հասցնում շրջափակման մեջ գտնվող քաղաքներին, իսկ ԱՄՆ-ը բավարարվեց միայն օդով սենդամբերք ուղարկելով: ԱՄՆ-ի եւ դաշնակիցների կողմից Բոսնիա-Հերցեգովինայում ուժ գործադրելու ցանկության բացակայությունն այն կասկածն է առաջացնում, որ այդ երկրների բուն նպատակը մի կողմից հասարակական կարծիքը նախապատրաստելն է տարբեր երկրներում մարդու իրավունքներ ռազմական ուժերի օժանդակությամբ պաշտպանելու ուղղությամբ, իսկ մյուս կողմից էլ արգելք դնելով բախումների ավարտի ճանապարհին, դրանք վերածել մշտական բշնամանքի եւ ընդհարումների: Սովորաբար հովանավորելով ավելի թույլին, արեւելյան հավասարակշռության են ստեղծում բախվող ուժերի միջեւ:

Սա շատ նման է հենց այն քաղաքականությանը, որը վարում են Իրաքում եւ Սոմալիում: Դաշնակիցները Քուվեյթն ազատագրելուց, Իրաքի ռազմական մեքենան ջախջախելուց հետո չտաղալեցին Բաղդադի վարչակազմը եւ թույլ տվեցին Սադդամի կառավարությանը շարունակել գոյատեւումը, քանի որ Սադդամի ներկայությունը անհրաժեշտ էր նրանց, որպեսզի արդարացվի դաշնակիցների ներկայությունը Պարսից ծոցի երկրներում: Այսպիսով ոչ միայն նրանց ռազմական ներկայության համար հնարավորություն է ընձեռնվում եւ զանազան գաղութատիրական նոր տիպի հարաբերություններ հարկադրում երկրներին, այլեւ նրանց հաջողվում է մեծ քանակությամբ սպառազինություններ վաճառել: Սոմալիում եւս ԱՄՆ զինված ուժերն անփոփոխ են թողել բախվող կողմերի ռազմական ուժերը եւ ընդհանրապես նրանց զինաթափելու ուղղությամբ ոչ մի ցանկություն չեն դրսեւորել, ինչպես նաեւ ոչինչ չեն արել ազատ ընտրությունների ճանապարհով ժողովրդավարական իշխանություն հաստատելու հարցում: ԱՄՆ զինված ուժերի նպատակն այդ շրջանում իրենց այնտեղ հաստատվելու խնդրի լուծումն էր: Միեւ էլ ազգային ողբերգության առկայությունը եւ հարցերի լուծումը կվերացնեն դրսի ուժերի ներկայության անհրաժեշտությունը երկրում:

Վերջերս ԱՄՆ-ը, Անգլիան եւ արեւմտյան մյուս երկրները Իրանում մարդու իրավունքների պաշտպանության հարցի նկատմամբ խիստ հետաքրքրություն են ցուցաբերում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչ արեւելյան բլոկի փլուզումը Իրանի ամբողջականությունը կենսական նշանակություն ուներ ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի համար, իսկ այսօր այլեւս դրա կարիքը չի զգացվում, ուստի պետք է նկատել, թե այդ երկրները «ինչ երազ են տեսել Իրանի կառուցվածքով»:

Մեզ թվում է հուսալ, որ այդ քաղաքականությունը, որ բերեւս կուղեկցվի Թեհրանի որոշ քաղաքական ոչ ճիշտ դիրքորոշումներով, չի հանգեցնի Իրանի կենսրոնական իշխանության թուլացմանը եւ երկրի մասնատմանը:

Պատրաստեց
ԷՄՄԱ ԲԵԳԻՋԱՆՅԱՆԸ

Տիրակալներ

Բալադյուր. Մատինյոնի անծանոթը

Այրիլ ամսին Փարիզի «Ֆիգարոյ» հրատարակչությունում լույս տեսավ Քլեր Շազալի «Բալադյուր» գիրքը, որը Ֆրանսիայի նոր վարչապետ Էդուար Բալադյուրի առաջին կենսագրականն է: Ք. Շազալը կին լրագրող է, TF-1 հեռուստաալիքով մեկնաբանում է շաբաթավերջի մամուլը: L'Express» հանդեսի եւ RTL ռադիոկայանի օրերս անցկացրած հեռագոտության համաձայն, հրատարակմանը հաջորդած շաբաթների ընթացքում գիրքը մշտապես առաջատար տեղ է գրաղեցնում այսպես կոչված «բեսթելլերների», այսինքն ամենալավ վաճառվող գրքերի շարքում:

Ինքը Էդուար Բալադյուրը դժգոհ չէ գրքից: Նա երկյուղներ ուներ, թե իր կյանքին նվիրված առաջին աշխատությունը նման կլինի վարքագրության կամ, ընդհակառակը, դատաքննության: Երկուսն էլ իր համար անվանարկիչ կլինեին: Սակայն հեղինակը կարողացել է խուսափել ծայրահեղություններից եւ ստեղծել վերլուծական ու ճշմարտացի աշխատություն: Միաժամանակ Ք. Շազալը որոշ մտքեր հետաքրքիր հարցեր է տալիս. «Էդուար Բալադյուր կկարողանա՞ արդյոք լինել այլ բան, բացի այն «բուրժուական հանրապետության» մարմնավորումից, որը նսեմացնում են հենց իր քաղաքական բարեկամներից ոմանք»: Ըստ երեւույթին, հեղինակը կուզենար, որ նոր վարչապետն ունենա համեմատաբար երիտասարդ քաղաքական գործիչներ Բեռնար Կուշների կամ Ֆրանսուա Լեոտարի ջերմ հաղորդակցականությունը, որոնք, իր կարծիքով, կարողանում են խոսել մարդու մասին եւ յուրաքանչյուրի մտերիմը լինելու երեւութականություն ստեղծել: Իսկ մնացյալ բաներում Ք. Շազալը ոչ թե դատողություններ է անում, այլ սոսկ նրբորեն նկարագրում Բալադյուրի կյանքը մանկությունից մինչեւ մեր օրերը:

«Ազգ» թերթը տարբեր առիթներով արդեն անդրադարձել է Է. Բալադյուրի կենսագրությանը: Նշենք միայն, որ նա ծնվել է 1929 թ. Զնյուենիայում (Իզմիր), հարուստ բուրժուաների ընտանիքում: 1930-ական թթ. նրա ընտանիքը երկդարյա բարգավաճումից հետո թողեց Զնյուենիան եւ մեկնեց Մարոկ:

Ք. Շազալի գրքում մանրամասն նկարագրվում է Բալադյուրի քաղաքական կյանքը 1970-1980-ական թթ: Նախագահ Ժորժ Պոմպիդուի օրոք Բալադյուրը նրա մերձավորներից մեկն էր, սակայն վարչապետ չդարձավ: 1974 թ. Պոմպիդուն մահացավ, եւ Վ. Ժիսկար դ'Էստենը դարձավ հանրապետության նոր նախագահ: Ամբողջ տասներկու տարի մինչեւ 1986 թ. Բալադյուրը մնաց ստվերում: Նախկին փայլուն պետական խորհրդականն ականատես եւ առանց ոգեւորության զբաղվում էր մասնավոր ձեռնարկությամբ: Ինչպես նշում է Ք. Շազալը, դա քաղաքական գործիչների երախտամոռության եւ անհավատարմության հետեւանքն էր: Ներկայումս Բալադյուրը գոլիստների ղեկավար Ժակ Շիրակի համախոհներից մեկն է: Փարիզի Մատինյոն պալատի նոր տերը վարչապետ Բալադյուրը գրքում պատկերված է որպես գործունյա հոռետես: Նա ավելի մեծ կասկածանքով է վերաբերվում մարդկանց, քան գաղափարներին:

«Պարի մաչ» հանդեսում լրագրող Ժերոմ Մոնոն նոր վարչապետին անվանում է «ընտանեսեր, եվրոդասեր, կառավարությանը նվիրված» անձնավորություն, դրվատելով նրա «հավասարակշռությունը իրավիճակների եւ մարդկանց գնահատման հարցում», ինչպես նաեւ «մտավոր ու բարոյական հավասարակշռությունը»: Ինչպես նշում է L'Express» հանդեսը, Բալադյուրը կարողանում է հարգվել եւ տարբեր իրավիճակներում իրեն պահել հավուր պատշաճի՝ հասարակ կամ պաշտոնական: Նա կարողացավ անկախ մնալ, առանձնապես իշխանության չձգտելով եւ իր թեկնածությունը չառաջադրելով հասնել իշխանության: Վարչապետն ունի շատ առաքինություններ, բարեկիրթ է, ճշտապահ, կայուն, ճարտիկ, աշխատասեր, հանդարտ, խոհեմ, ազնիվ, հավատարիմ: Նա ունի չորս որդի: Եւ այժմ պետական որոշ գործիչներ փորձում են գոնե ընտանիքի բազմանդամությամբ նմանվել վարչապետին: Այսպես, ազգային կրթության նորընտիր նախարար Ֆրանսուա Բայրուն անդադար հայտարարել, թե ինքը վեց զավակ ունի: Կարծում ենք, սա մեկ անգամ եւս վկայում է Էդուար Բալադյուրի բարձր հեղինակության մասին:

ՊԵՏՐՈՍ ՔԵՇԻՇՅԱՆ

Լուրերի Հոսք

Միջազգային վալյուտային հիմնադրամը կանխագուշակում է

ԱՊՀ ռուբլու գոտին հավանաբար կդադարեցնի իր գոյությունը 1994 թ. վերջին, հաղորդեց Ֆրանս Պրես գործակալությունը՝ վկայակոչելով Միջազգային վալյուտային հիմնադրամի պաշտոնական ներկայացուցչին: Նախկին միութենական հանրապետություններից մի քանիսն արդեն մտցրել են կամ մտադիր են շրջանառության մեջ մտցնել սեփական վալյուտա: Ռուսաստանի կենտրոնական բանկի ռուբլու կուրսը կենտրոնացնելու քաղաքներն անհաջողության են մատնվում, չնայած դիլ հավանական է, որ ռուբլու գոտին վերանա այս տարի: Շատ զարմանալի կլինի, եթե այն մնա մինչեւ 1994 թ. վերջերը, հայտարարեց ՄՎՀ-ի բաժնի տնօրենը, որը պատասխանատու է նախկին ԽՍՀՄ գործերի վիճակի համար: ԻՏԱՐ-ՏԱՍՍ

Քաղմիրի ոստիկանությունը գործադուլի մեջ

Հնդկական Քաղմիրի 32 հազար ոստիկաններ չորեքշաբթի որոշեցին շարունակել նախորդ օրն սկսված գործադուլը, այս անգամ բողոքելով 79 ոստիկանի ազատման հրահանգի դեմ: Կառավարությունը նրանց ազատել էր նախորդ օրվա գործադուլից հետո, պատճառաբանելով, որ աշխատավորական իրավունքները չեն տարածվում պետական պաշտոնեության վրա: Ոստիկանները գործադուլի էին դիմել ցույցերի ժամանակ բանակայինների կողմից իրենց 9 գործընկերների սպանության համար:

Ջորջ Քերին Թբիլիսիում

Թբիլիսի ժամանեց Քենթբրեիի արքեպիսկոպոս Ջորջ Քերին: Նախատեսվում են նրա հանդիպումները Վրաստանի կաթողիկոս՝ Իլյա Երկրորդի, ինչպես նաեւ պետության ղեկավար Էդուարդ Շեւարդնաձեի եւ խորհրդարանի խոսնակ Վախթանգ Գոգաձեի հետ: Սնարտ

Համագործակցություն Հարավային Կորեայի հետ

Վրաստանի կառավարությունը մտադիր է Հարավային Կորեայի հետ համագործակցության ծրագիր: Խոսքը 35 միլիոն դոլլարի վարկ հատկացնելու մասին է, որը պետք է օգտագործվի հեռախոսային ցանցի արդիականացման, վերակառուցման եւ ընդլայնման համար: Նախատեսվում է փոխարինել Թբիլիսիի մոտ 40 հազար համարներ եւ մինչեւ 1994 թ. ընդլայնել հեռախոսային ցանցը՝ հասցնելով 100 հազար համարի: Նախագծի համաձայն, կայանները կահավորված կլինեն հարավկորեական արտադրության ժամանակակից սարքավորումներով: Սնարտ

Նոր տաճար Արխանգելսկում

Արխանգելսկում բեմի եւ քաղաքացիական տարանի պատվերով նախատեսվում է կառուցել մեծ յոթգմբեթանի մայր տաճար, որի բարձրությունը կլինի 70 մետր: Էսքիզներն ու մոդելները կատարում են Սանկտ Պետերբուրգի կերպարվեստի ակադեմիայի ճարտարապետները: Սնարտ

Ղղրղզստանում 68 թերթ

Այսօր Ղղրղզստանում գործում է զանգվածային լրատվության 88 միջոց, այդ թվում 68 թերթ, 12 ամսագիր, 4 հեռուստա եւ 2 ռադիո կառուցվածք: Շուտով կգրանցվի եւս 20 հրատարակություն: 11-ը տարածում են իրենց արտադրանքը Ղղրղզստանում եւ նրա սահմաններից դուրս, 32-ը հանրապետության ամբողջ տարածքում, մնացածը շրջանային, քաղաքային եւ մարզային հրատարակություններ են: 42-ը լույս են ընծայվում դղրղզերեն, 10-ը՝ ռուսերեն, 20-ը՝ եւ դղրղզերեն, եւ ռուսերեն: Կա նաեւ ուզբեկերեն, գերմաներեն եւ թուրքերեն լեզուներով հրատարակվող մամուլ: Սնարտ

digitised by A.R.A.R.@

Աշխարհի Հոսք

Բ. Մալրունին կողմնակից է Ելցինի հեղափոխությանը

Ռուսաստան կատարելիք իր այցի նախօրեին ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակցին տված հարցազրույցում Կանադայի վարչապետ Բ. Մալրունին հայտարարեց. «Մեր դիրքորոշումը պարզ է: Մենք ուզում ենք, որ Ռուսաստանը եւ Ելցինի հեղափոխությունը հաղթեն: Եւ մենք հնարավոր ամեն ինչ կանենք, որպեսզի դա տեղի ունենա»: Բնութագրելով Ռուսաստանի վերափոխումների նկատմամբ իր վերաբերմունքը նա ասաց, որ «ծայրաստիճան դրական» է գնահատում վերջերս կայացած հանրաքվեի արդյունքները: Վարչապետը գոհունակություն հայտնեց այն կողակցությամբ, որ Վանկուվերի բարձր մակարդակի հանդիպումը եւ դրան հաջորդած Մեծ յոթնյակի երկրների ներկայացուցիչների բանակցությունների Տոկիոյի փուլը ճանապարհ են հարթել «Ռուսաստանին Արեւմուտքի աջակցության համար: Դա չափազանց կարեւոր է կարճաժամկետ այն խնդիրների լուծման համար, որոնց բախվում է Ռուսաստանի կառավարությունը: Սակայն առավել երկարաժամկետ հեռանկարների լուծումը, իհարկե, հենց ռուսների ձեռքին է: Մենք միայն ժամանակավոր օգնություն ենք ցույց տալիս»: Ինչպես ասաց վարչապետը, Ռուսաստանն ունի «աշխատող ձեռքեր, վիթխարի հողազանգված, բնաբաստաններ եւ վերին աստիճանի կրթված ու խելոք ժողովուրդ: Ռուսաստանը կարոց է միայն ժողովրդավարական համակարգի եւ ազատ շուկայի»: Խոսելով Կանադա-ռուսական համագործակցության առավել խոստումնալի ոլորտների մասին, Մալրունին նախ եւ առաջ նշեց Ռուսաստանի գյուղատնտեսական հատվածի զարգացումը, արդիականացումը եւ այնտեղ բաշխման ժամանակակից համակարգի ստեղծումը: Դրա հետ մեկտեղ նա ասաց, որ Ռուսաստանի վարչակազմը պետք է հասկանա, որ Արեւմտյան կոմիտալը ներդրվում է միայն այնտեղ, որտեղից շահույթ ստանալու հույսեր կան:

ԱՐՍԵՆՊՈՒՆ ԻՏԱՐ-ՏԱՍՍ

Ոստիկանության նվերը

Գերմանական Շվերին քաղաքի ոստիկանությունը որոշել նվեր Լիտվայի գործընկերներին է հանձնել 45 մարդասար եւ 15 բեռնասար մեքենաներ, ինչպես նաեւ 20 ավտոբուս:

Սնարք

Արեւմուտքը մեզ չի օգնի

Մայիսի 4-ին կայացած խորհրդարանի նիստում վերջերս Բրյուսելից վերադարձած Վրաստանի դաշտպանության նախարար Թենգիզ Կիտովանին հայտարարեց, թե Վրաստանը չդեռ է հույսը դնի Արեւմուտքի ռազմական օգնության վրա, քանի որ ՆԱՏՕ-ն եւ այլ միջազգային կազմակերպությունները վախենում են Ռուսաստանի ռազմական ուժից: Ըստ նրա, աբխազական հիմնահարցը անհրաժեշտ է լուծել քաղաքական ճանապարհով: Ռազմական գերատեսչության ղեկավարը կոչ է, որ Սուխումի բնակչությունը էվակուացվի:

Սնարք

Մաֆիան գործում է նաեւ Թբիլիսիում

Վրաստանի ՆԳՆ մամուլի կենտրոնը հաղորդեց, որ մայիսի 4-ի առավոտյան առողջապահության նախարարության շենքի մոտ անհայտ անձինք դայթեցրել են Վազ-2106 մակնիշի ավտոմեքենան: Մեքենայի վարորդը, ոմն Թամազ Գուգեբաշվիլի, գոհվել է: Վրաստանի ՆԳՆ մասնագետների կարծիքով, այդ ձեւով տեղական մաֆիայի ներկայացուցիչները դայթարում են ազդեցության ոլորտի համար:

Սնարք

Սպիդի «ընդամենը» 100 հազար վիրուսակիր

Վերջերս անցկացված երկու հետազոտությունների համաձայն, Ֆրանսիայում կա սպիդի «ընդամենը» 100 հազար վիրուսակիր, իսկ նախորդ հաշվարկները չափազանցված են եղել, հայտարարեցին բժիշկ Ժ.Բ. Բրյունեն եւ դոկտոր Ա. Ժ. Վալրոնը սպիդի հետազոտման ազգային գործակալության գիտաժողովում: Ցավոք, այս արդյունքները համաճարակի նվազում ցույց չեն տալիս:

Մեկնաբանություն

Մուսա լեռան հերոսամարտը երաժշտական կոթող դարձած

Նախորդ շաբաթ Երեւանում առաջին անգամ համերգային կատարմամբ հնչեց չեխ ժամանակակից կոմպոզիտոր Յոզեֆ Մատեյի «Մուսա լեռան 40 օրը» օրատորիան:

«Ս. Սրամ Խաչատրյան» մեծ համերգասրահում տեղի ունեցած երաժշտական այդ միջոցառման անմիջական առաջադրումից մենք միտումնավոր խուսափեցինք՝ փորձելով ավելի շատ բան իմանալ այն կազմակերպող «Ինտելեկտուալների երաժշտություն» միջազգային լիգայի մասին: Լիգան, ինչպես պարզվեց կոմպոզիտորներ Յուրի Ղազարյանի եւ Էդուարդ Սաղոյանի հետ մեր զրույցից, որոնք համադասասխանաբար այդ կազմակերպության նախագահն ու փոխնախագահն են, ստեղծվել է 1991-ի աշնանը: Նպատակը մնկն է եղել. հիմնել գործնական մի կազմակերպություն, որը թույլ կտար նոր ժամանակների ոգուն համադասասխան ծավալել երաժշտական-համերգային գործունեություն: Դա պիտի իրականացվեր գեղարվեստական բարձր եւ լարդ արժեք ներկայացնող երաժշտական ստեղծագործությունների կատարմամբ, որոնք միաժամանակ պիտի ունենային նաեւ հասարակական հնչեղություն: Ընդ որում, չպիտի լինեին ժանրային որեւէ սահմանափակումներ. կազմակերպվող միջոցառումներում հավասարաչափ հնչելու էին դասական եւ ժամանակակից կոմպոզիտորների գործեր, ազգային երգ ու պար եւ այլ ժանրեր՝ միայն թե դրանցից լավագույնն ու բարձրարժեքը: Իսկ «ինտելեկտուալներ» ասելով առաջին հերթին նկատի է առնվում հասարակության այն խավը, այն ունկնդիրը, որի համար հետաքրքրություն կներկայացնեին նման ծրագրերը:

Իսկ դրանք շատ-շատ են: Առաժմ, սակայն, իրագործվել են երկուսը: Առաջինը անցյալ տարեվերջին էր՝ դեկտեմբերի 25-ին, երբ նույն համերգասրահում կազմակերպվեց «Ամերիկա-500» համերգը նվիրված Ամերիկայի հայտնագործման հոբելյանին: Ընդգրկված էին այն հայ կոմպոզիտորների ստեղծագործություններ, որոնք գրվել են ամերիկյան թեմաներով կամ որոնց հիմքում ընկած են ամերիկյան սյուժեներ: Այդ համերգին անգլերեն բնագրով հնչեցին հատվածներ Յուրի Ղազարյանի «Էոնոս Հեմինգուեյ» օրատորիայից, համերգային տարբերակով կատարվեց Էդուարդ Սաղոյանի «Է՛յ, ո՞վ կա այդտեղ» օրատորն ըստ Վիլյամ Սարոյանի համանուն դիեսի եւ ամերիկահայ կոմպոզիտոր Հայկ Բոյաջյանի «Ասք ամերիկյան հնդկացիների մասին» սիմֆոնիան:

Երկրորդ միջոցառման ժամանակ, որ կազմակերպվեց մի քանի օր առաջ ապրիլի 28-ին, դարձյալ համերգային տարբերակով առաջին անգամ մեզանում հատվածաբար հնչեց չեխ ժամանակակից կոմպոզիտոր Յոզեֆ Մատեյի «Մուսա լեռան 40 օրը» օրատորն: Ինչպես տարիներ առաջ ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելի համանուն վեպի հայերեն բարգմանությունն էր հայտնություն բոլորիս համար, այնպես էլ սա: Երկու ստեղծագործություններն էլ, ներշնչված մեր ժողովրդի մի փոքրիկ հատվածի հերոսական ոգեւորով, նորովի են ներկայացնում մեր իմքնությունը, իմքներս մեզ ճանաչել տալիս: Դրանք հայացք են կողքից, բայց ոչ կողմնակի մարդու հայացք, այլ բարեկամի:

Յոզեֆ Մատեյը այս օրատորիայի առաջին տարբերակը ստեղծել է 1957 թվականին: Երկու տարի անց, ըստ նույն երաժշտական թեմաների, գրել է իր Թիվ 2 սիմֆոնիան: Ապա տարիներ շարունակ անդադար մշակել է իր օրատորիան՝ խմբագրելով թե երաժշտությունը, թե լիբրետոն, որի վերջնական հեղինակները դարձան Ֆրանտիշեկ Կաֆկան եւ Յարմիլա Կրուլիշովան: Այդ ընթացքում նա գալիս է Հայաստան, այցելում նաեւ Մուսա լեռ, հանդիպում նրա հերոս ոլաշտոնների հետ: Ստեղծագործության ավարտից հետո այս արվեստագետը շատ էր երազում իր ստեղծագործությունը բեմադրված տեսնել Հայաստանում:

Չնայած տարիներ առաջ կոմպոզիտորներ Յուրի Ղազարյանը եւ Էդուարդ Սաղոյանը ոչ ցանկություն չդրսեւորեցին այս ուղղությամբ՝ անցնելով մշակույթի նախարարության եւ օրատորիայի թատրոնի բավիղներով, բայց գործը տեղից չշարժվեց: Երբ նրանք ստեղծեցին իրենց ընկերությունը, արդեն իրենց սեփական ուժերով որոշեցին բեմադրել այն: Նրանց ձեռք մեկնեց «Մուսալեռ» հայրենակցական միությունը (նախագահ Կամո Տեր-Պետրոսյան) եւ մի քանի այլ հովանավոր կազմակերպություններ: Այս անգամ ստեղծագործությունը կատարվեց համերգային տարբերակով՝ հրավիրելով Ազգային օրատորիայի եւ բալետի թատրոնի մենակատարներին եւ Հայաստանի այլ երաժիշտ-կատարողների: Համերգին կարեւոր մասնակցություն բերեց Հայաստանի երաժշտական ընկերության Արամ Տեր-Հովհաննիսյանի անվան երգչախումբը՝ նրա գեղարվեստական ղեկավար Էմմա Ծատուրյանի գլխավորությամբ:

Ինչ խոսք, ի տարբերություն օրատորիային բեմականացման, նման ժանրի գործերի համերգային կատարումը սովորաբար ունենում է անխուսափելի կորուստներ: Բայց համերգի կազմակերպիչներն այնքան ինչ արել էին դրանք նվազագույնի հասցնելու եւ Մատեյի ստեղծագործության նուրբ երանգներն ունկնդրին լիարժեքորեն մատուցելու համար: Եթե որակելու լինենք կատարվածի ժանրը, ապա այն ոչ այնքան օրատորիային ստեղծագործության համերգային կատարում էր, որքան դրա համերգային բեմադրություն, որովհետեւ բեմում կար դերասանական խաղ եւ մենակատարների համաձայնասխան զգեստավորում: Բեմական գործողության ծավալմանը իր ասմունքով մեծապես օգնեց Ժասմեն Գեւորգյանը: Բանաստեղծ եւ թարգմանիչ Հովհաննես Հարությունյանը տնքալան աշխատանք էր թափել, որպեսզի օրատորիան հնչի հայերեն:

Համերգի ավարտից հետո նվագավար Օհան Դուրյանը, բարձր գնահատելով այս ստեղծագործության գեղարվեստական արժանիքները, մեզ հայտնեց, որ հաստատապես վճռել է հաջորդ տարի այն բեմադրել Ազգային օրատորիայի բեմում:

«Ինտելեկտուալների երաժշտություն» միջազգային լիգայի դեվարները լի են վճռականությամբ ծառայեցնելու երաժշտությունը այսօրվա բարդացած տնտեսության կարիքներին: Ի տարբերություն մյուս քաղաքակիրթ երկրների, մեզ մոտ դեռեւս հետազոտություն չի արվել, օրինակ, ինչ կարող է տալ երաժշտությունը տնտեսության զարգացմանը: Հիշենք, որ անգլիական «Բիզնես հանրահայտ խումբն իր գործունեությամբ ժամանակին բերում էր երկրի տարեկան ազգային եկամուտի 25 տոկոսը: Արժե ուրեմն մտածել եւ գործել այս ուղղությամբ: Լիգան պատրաստվում է այս տարի Հայաստանում իրականացնել միջազգային գիտաժողով նվիրված հենց այս թեմային: Հրավիրելու են մասնագետներ աշխարհի տարբեր երկրներից, այժմ՝ տարվում են նախապատրաստական լայն աշխատանքներ: Մեկ համերգ էլ ծրագրված է կազմակերպել այս աշնանը՝ նվիրված Եվրոպական երաժշտության օրվան:

ԼԵՎՈՆ ԼԱՇԻՆՅԱՆ

ԱԶԳ - ՄԱՐԶԱԿԱՆ

«ՅՈՒՎԵՆԹՈՒՍԻ» ՀԱՂԹԱՆԱԿԸ ԿԱՍԿԱԾ ՉԻ ՀԱՐՈՒՅՈՒՄ

Արդեն բավական ժամանակ է, ինչ եվրոպայի ֆուտբոլային ակումբների միջեւ խաղարկվում են երեք գավաթներ՝ եվրոպայի երկրների չեմպիոնների գավաթ, գավաթակիրների գավաթ եւ ՈՒԵՖԱ-ի գավաթ: Հենց այս հերթականությամբ էլ ավանդաբար որոշվել է այդ մրցաշարերի կարեւորությունը: Արդարացի՞ է դա, թե ոչ, եթե խոսքը գնում է մրցող թիմերի խաղամակարդակի մասին: Այնքան էլ հեշտ հարց չէ, քանի որ այն առաջին հերթին կախված է վիճակահանությունից, որն անցկացվում է ամեն փուլից հետո: Բացի դրանից, հնարավոր չէ օբյեկտիվորեն համեմատել, ասենք, Գերմանիայի առաջնության երրորդ մրցանակակրի եւ Ֆինլանդիայի կամ Լեհաստանի չեմպիոնների ուժերը: Այնուհանդերձ կփորձենք հասկանալ, որ ՈՒԵՖԱ-ի գավաթը երեք գավաթներից ամենաբարդն է: Առաջինը, գավաթի խաղարկության մասնակից թիմերի քանակը կրկնակի ավել է եւ մեկ փուլ ավել է անցկացվում: Երկրորդ, մասնակիցների մեջ մեծ թիվ են կազմում այն հեղինակավոր ակումբները, որոնք այս կամ այն դասակարգով զիջել են իրենց երկրի չեմպիոնին կամ գավաթակրին:

Այս անգամ գավաթի խաղարկության եզրափակիչ են դուրս եկել Գերմանիայի Դորտմունդ քաղաքի «Բորուսիա» եւ իտալական «Յուվենթուս» թիմերը:

Առաջին հանդիպումը (ըստ ՈՒԵՖԱ-ի գավաթի կանոնադրության, եզրափակիչ փուլում թիմերը հանդիպում են երկու անգամ) տեղի ունեցավ նախորդ օրը Դորտմունդում: Խաղասկզբում մարզադաշտում հավաքված 36 հազար գերմանացի հանդիսատեսները բողոքելու առիթ չունեին: Խաղի երկրորդ րոպեին դաշտի տերերն արդեն բացել էին հաշիվը, դա արեց Ռումենիգեն: Սակայն հետագայում խաղի բնույթը փոխվեց: Նախաձեռնությանը տիրեցին իտալացիները եւ մեթոդաղես սկսեցին ճնշում գործադրել դաշտի տերերի դարդասին: Շուտով դա տվեց իր պտուղները: «Յուվենթուսի» կիսապաշտպան Դինո Բաջոն հավասարեցրեց հաշիվը, իսկ հիշ անց իտալական ֆուտբոլի աստղ Ռոբերտո Բաջոն առաջ մղեց իր թիմին: 2:1 հաշվով թիմերը գնացին հանգստի: Երկրորդ խաղակեսում գերմանացիներն ամեն ինչ արեցին պարտությունից խուսափելու համար, սակայն դա նրանց չհաջողվեց: Դեռ ավելին, Ռոբերտո Բաջոն երրորդ գնդակն անցկացրեց նրանց դարպասը: «Յուվենթուսի» եւ Իտալիայի ազգային հավաքականի 26-ամյա հարձակվող Բաջոն այդ օրը փայլեց ամբողջ շուքով եւ պատահական չէ, որ վերջերս «Յուվենթուսը» Բաջոյի հետ նոր պայմանագիր կնքեց, երկարաձգելով այն մինչեւ 1996 թ.:

Ռոբերտո Բաջոն

Պատասխան հանդիպումը երկու շաբաթից կկայանա Թուրինում, որտեղ «Յուվենթուսի» ընդհանուր հաղթանակը կասկած չի հարուցում:

ՈՒԵՖԱ-ի գավաթի պատմությունն անսովոր է: Այս գավաթը եւ հին է, եւ նոր, մյուս եվրոպական գավաթների համեմատությամբ: Գրեթե 40 տարի առաջ՝ 1955 թ. ՈՒԵՖԱ-ի փոխնախագահ, օվեցարացի է. Բ. Թոմենի առաջարկությամբ սկսեց անցկացվել ֆուտբոլային մրցաշար եվրոպական այն խաղերի միջեւ, որոնք մասնակցում էին միջազգային արդյունաբերական տոնավաճառին: Գավաթը անվանվեց «Ինտերնեյշընալ Ինդաստրիս Ինտեր Սիտիես Քուփ», ավելի կարճ տոնավաճառի գավաթ: Առաջին մրցաշարին մասնակցում էին 10 խաղաքի թիմեր: Խաղարկությունը 1955 թ. երկարաձգվեց մինչեւ 1958 թ.: Երկրորդ խաղարկությունում արդեն անցկացվեցին բարեփոխումներ, թիմերի թիվն աճեց 16-ի, իսկ մրցաշարը շարունակվեց ընդամենը երկու տարի (1958-1960): Եւ խաղաքների հավաքականներից բացի իրավունք տրվեց մասնակցել նաեւ ֆուտբոլային ակումբներին (մեկ երկրից թույլատրվում էր մասնակցել մինչեւ չորս թիմ): 1969 թ. մասնակիցների թիվը հասնում էր 64-ի, իսկ մասնակցել ցանկացողների թիվն անհամեմատ շատ էր: Եւ 1971 թ. կեսերին ՈՒԵՖԱ-ի ղեկավարությունը որոշեց մրցաշարն անցկացնել իր հովանու տակ: Նախ վերանվանվեց գավաթը. «Տոնավաճառի գավաթ»-ը կոչվեց ՈՒԵՖԱ-ի գավաթ: Սնում էր որոշել նախորդ գավաթի ճակատագիրը, որը մինչ այդ խաղարկվել էր 13 անգամ: Հետաքրքիր որոշում կայացվեց, այն խաղարկվեց գավաթի առաջին եւ վերջին հաղթողների միջեւ: Իսպանական «Բարսելոն»-ը 2:1 հաշվով հաղթեց Անգլիայի «Լիդս Յունայթեդ» թիմին, եւ գավաթը հավերժ հանձնվեց նրան:

Նոր գավաթը նույն մրցակարգով սկսվեց խաղարկվել եվրոպական 64 թիմերի միջեւ եւ շարունակվում է մինչ այսօր: Գոյություն ունեցող գործակիցների աղյուսակով որոշվում է տվյալ երկրի թիմերի քանակը: Առաջին երեք տեղերը գրաված պետություններին թույլատրվում է գավաթի խաղարկությանը հայտակցել 4 թիմ, հաջորդ հինգ տեղերը զբաղեցնող պետություններին 3, մյուս 13-ին երկու, իսկ մնացածին 1:

Գավաթի խաղարկության եզրափակիչ հանդիպումների արդյունքները՝ սկզբում նշված են գավաթակիրների անունները:

Տոնավաճառի գավաթ

1958 Ֆ. Բարսելոն-Ֆ. Լոնդոն	2:2, 0:0
1960 Ֆ. Բարսելոն-«Բիրմինհեմ»	0:0, [illegible]
1961 «Ռոմա»-«Բիրմինհեմ»	2:2, 2:0
1962 «Վալենսիա»-«Բարսելոն»	6:2, [illegible]
1963 «Վալենսիա»-«Զագրեբ»	2:1, 2:0
1964 «Ռեալ» Մ.-«Վալենսիա»	2:1
1965 «Ֆերենցվա.»-«Յուվենթ.»	1:0
1966 «Բարսելոն»-«Ռեալ» Մ.	0:1, [illegible]
1967 «Դինամո» Զագ.-«Լիդս»	2:0, [illegible]
1968 «Լիդս»-«Ֆերենցվարոշ»	1:0, [illegible]
1969 «Նյուքասլ.»-«Ռ. Ռոմա»	3:0, [illegible]
1970 «Արսենալ»-«Անդերլեխտ»	1:3, [illegible]
1971 «Լիդս»-«Յուվենտուս»	2:2, [illegible]

ՈՒԵՖԱ-ի գավաթ

1972 «Տոտենհեմ»-«Վոլվերհեմ.»	2:[illegible]
1973 «Լիվերպուլ»-«Բորուսիա»	3:0, [illegible]
1974 «Ֆեյենորդ»-«Տոտենհեմ»	2:2, [illegible]
1975 «Բորուսիա»-«Տվենտե»	0:0, [illegible]
1976 «Լիվերպուլ»-«Բրյուգե»	3:2, [illegible]
1977 «Յուվենթ.»-«Ատլետիկո»Մ.	1:0, [illegible]
1978 «Էյնդհովեն»-«Բաստիա»	0:0, 3:0
1979 «Բորուսիա»-«8. Զվեզդա»	1:1, 1:0
1980 «Այնտրախտ»-«Բորուսիա»	2:3, 1:0
1981 «Իպսվիչ»-«Ալտմահար»	3:0, 2:4
1982 «Գյոթեբորգ»-«Համբուրգ»	1:0, 3:0
1983 «Անդերլեխտ»-«Բենֆիկա»	1:0, 1:1
1984 «Տոտենհեմ»-«Անդերլեխտ»	1:1, 1:1
(11 մետր. 4:3)	
1985 «Ռեալ» Մ.-«Վիդեոտոն»	3:0, 0:1
1986 «Ռեալ» Մ.-«Քյոլն»	5:1, 0:2
1987 «Գյոթեբորգ»-«Դանդի»	1:0, 1:1
1988 «Բայեր»-«Էսպանյոլ»	0:3, 3:0
(11 մետր 3:2)	
1989 «Նապոլի»-«Շտուտգարտ»	2:1, 3:3
1990 «Յուվենթ.»-«Ֆիորենտին.»	3:1, 0:0
1991 «Ինտեր»-«Ռոմա»	2:0, 0:1
1992 «Այաքս»-«Թորինո»	2:2, 0:0

ԱԵՌՈՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Լուսաբեր

ՉՕՐԱՎԻԳ ԼԻՆԵՆՔ ԱՐՑԱԽԱԿԱՆԻ ՆԱԽԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ ԵՌԱԲԼՈՒՐՈՒՄ

Հինգ տարի է մեր ազգային ազատագրական հերոսամարտը ցնցում է աշխարհը: Ղարաբաղի ինքնաղաշտպանական ուժերը հայ զինուորին վայել քաջությամբ մաքառում են մայր հողը: Անհաւասար մարտերում նահատակուել եւ նահատակւում են մեր ժողովրդի լաւագոյն զաւակները:

Ղարաբաղի Չափար գիւղից տասներկուամեայ Վախթանգ Սարգսեան, որը զոհուեց հայրենի գիւղի ղաւեշտանութեան ժամանակ: Չորս երեխաների հայր հայդուկ Արշաւիր Ասլանեան, որը 1991 թ. հոկտեմբերի 11-ին նահատակուեց Շահումեանում հայրենի հողը ղաւեշտանելիս... Տակաւին երիտասարդ «ծուռ մտեցի» Մուշեղ Մխոյեանին 1989 թ. աշնանը բախտ ունեցայ գծանկարել Կռոնիձորի դիրքերում եւ որը 1991-ին զոհուեց Տաւուշում: Իսկ առասպելական Սիմոն Աշիկգեոգեանը (Դեդ), Աշոտ Ղուլեանը (Բեկոր), Յովիկ Քալաջեանը (Աւազեկ), Թաքուլ Կրոնյեանը, Անդրանիկ Յարութիւնեանը... կամ տասնինգամեայ նժդեհական Մարտակերտի շրջանի Կարմրաւան գիւղից Իգոր Հասարբեանը, որը շրջապատման մէջ բռնամու ձեռքը չընկնելու համար վերջին գնդակով կրակում է իր սրտի մէջ՝ բացականչելով. «Յայտնեցէք հօրս ու մօրս, որ ինձ թուրքը չի առնել...»:

Թւում է թէ ղաստուրիւնը ժամանակի հողով մեկուսացրել էր հայոց մահաւարս զինուորների երեւոյթը մեր օրերից... Մինչեւ մենք ինչպէս հարկն է չենք ճանաչում մեր ժողովրդին: Չի գիտէինք որ ազատամարտում կը ծնուէին Լեոնիդ Ազգալդեանների ու Խաժակ Շահբազեանների մահաւարս գումարակները: Սեւ ժառաւենները ճակատներին կապած եւ ճերմակ դասակները ուսադարկերում այդ սուրբ տղաների արիւնը կաթիլ առ կաթիլ ներծծում է մայր հողի մէջ՝ նորանոր ծիլեր տալու համար:

Վերջերս՝ ապրիլի 17-ին իր ծննդավայր Գիւլիստանի լեռներում իր ութ զինակիցների հետ նահատակուեց շրջանի ինքնաղաշտպանութեան առաջնորդ Շահէն Մեղրեանը...

Շատ են նրանք՝ մեր հերոս ազատամարտիկները, որոնցից իւրաքանչիւրի մասին վէպեր պիտի գրուեն: Մենք՝ ապրողներս, ծանր պարտքի տակ ենք նրանց յիշատակի առաջ: Մենք պարտաւոր ենք միացեալ ուժերով ու միջոցներով Եռաբլուրում կառուցել Արցախականի Նահատակաց եկեղեցի՝ ի յիշատակ մեր խնկաբոյր հերոսներին:

Երեւանի քաղաքային խորհուրդը արդէն հողայատկացում է արել Եռաբլուրում պանթեոնի եւ եկեղեցու շինարարութեան համար: Դրանց նախագծերի հեղինակը քաղաքի գլխաւոր ճարտարապետ Ասլան Մխիթարեանն է:

Արցախականի Նահատակաց եկեղեցու կառուցմանը իրենց զօրակցութիւնն են յայտնել Արարատեան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Գարեգին եպիսկոպոս Ներսիսեանը, ՀՀ պաշտպանութեան նախարարութիւնը, Հայաստանի հասարակական-քաղաքական կազմակերպութիւնները, կուսակցութիւնները, միութիւնները

Այս առթիւ մեր հայացքն ենք ուղղում դէպի մեր Սփիւռքն ու յատկապէս Հայ բարեգործական ընդհանուր միութիւնը՝ ակնկալելով նրանց շուտափեայ օգնութիւնը այս համազգային կառոյցի համար:

Այս ձեռնարկը սովորական հանգանակութիւն չէ, քանի որ այդ յաստկացումները մենք սպասում ենք ոչ թէ առիթաւորեան դուռը հասցուած մեր ժողովրդից, այլ ազգային, հասարակական, հայրենակցական, ինչպէս նաեւ ստեղծագործական կազմակերպութիւններից ու միութիւններից, ինչպէս նաեւ հայրենիքի ու Սփիւռքի այն անհատներից, ովքեր կը ցանկանան իրենց ներդրումն ունենալ այս գործում:

Դրամական յաստկացումների, հաշուի համարի եւ Արցախականի Նահատակաց եկեղեցու շինարարութեանն առնչուող աշխատանքների համար Արարատեան հայրապետական թեմի առաջնորդարանին կից կազմուած է գործադիր մարմին: Շուտով բացուելու է յատուկ հաշիւ, որի մասին լրատու միջոցներին կը տրուի լրացուցիչ տեղեկութիւն:

ԿԱՐԷՆ ՍՍԲԱՏԵԱՆ
Երեւան

Երեւան

Փլուզումներ Նուբարաշենի գերեզմանոցում

Ծանր ձմռանից հետո իրենց հարազատների գերեզմանին այցելած շատ երեւանցիներ դրանք բանդված գտան: Ինչպես տեղեկացանք Երեւանի գործադիր կոմիտեի սպասարկման պորտի վարչության պետ Ռոբերտ Մինասյանից, պատճառը ստորգետնյա ջրերի հեղեղումով Նուբարաշենի գերեզմանոցի տարածքի մի մասի հողաշերտի սահքն է: Արդյունքում հազարավոր գերեզմաններ են տուժել:

Քաղաքային իշխանությունները գերեզմանոցում համապատասխան ուսումնասիրություններ եւ սահքը դադարեցնելու միջոցառումներ մշակելու խնդրանքով դիմել են կառավարությանը: Միաժամանակ ստեղծվել է նոր հանձնաժողով, որի առջեւ քաղաքային նոր գերեզմանոցի համար համապատասխան տարածք գտնելու խնդիր է դրված:

Պրն Մինասյանն ասաց նաեւ, որ Երեւանի քաղաքապետարանի նախագծման համար արդեն գումարներ է հատկացրել, որի շինարարությունը հաստատաբար կսկսվի այս տարվա վերջին: Հ. Պ.

Մոսկվա

Սպանվեց նախկին բռնցքամարտիկ հայ գործարարը

Մայիսի 4-ին Սանկտ Պետերբուրգում մաֆիոզ խմբավորումների գնդակին զոհ գնաց Երեւանցի գործարար, նախկին հայտնի բռնցքամարտիկ Վահան Այվազյանը, եղբայրը 1990 թ. ամռանը Երեւանում եղբայրասպան գնդակով սպանված, Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր Վիտյա Այվազյանի: Հանգուցյալը Սանկտ Պետերբուրգում մի քանի տարի արդեն զբաղվում էր շուրիզնեսով, ուներ սեփական բար-ակումբ: ■

ԻԿ «ՄՅՈՒԴ»

Իրավաբանական ինստիտուտը հայտարարում է

Նախադպրոցական բաժնի դիմորդների ընդունելություն իրավաբան-իրավագետ եւ իրավաբան-բիզնեսմեն մասնագիտություններով՝ տասը մասնագիտացմամբ: Ավարտական քննությունները հաջողությամբ հանձնած ունկնդիրները կընդունվեն ինստիտուտ:

Ընդունելության պայմանների վերաբերյալ տեղեկությունները ինստիտուտում՝ Երեւան, 375001, Թումանյան 11:

Հեռախոսներ՝ 56-75-07, 58-21-18

Ընդունող հանձնաժողով

«ԿԱՊՐՈԼԻՏ» ֆիրման եւ
«ԲԻՈԿՈՆՎԵՐՍԻԱ» ասոցիացիան

Ջրվեժ ավանի պահեստից վաճառում են կենսահումուս:
Մեծածախ գնորդների համար սահմանված է 20 տոկոս զեղչ:
Վճարը ցանկացած ձեւով
Հեռախոսներ՝ 27-81-91, 58-04-26, 58-54-27, 56-83-31:

Լուրեր-Լուր

Ելցինը կրկին հեռաձգեց իր այցը Տոկիո

Բ. Ելցինը փոխել է ավելի վաղ ընդունած որոշումը եւ չեղյալ է հայտարարել մայիսին Տոկիո կատարելիք այցը: Ճապոնիայի արտգործնախարար Կ. Մուտոն հերքեց այն ենթադրությունները, թե այցը չիրականացնելու վճիռը բացասական ազդեցություն կգործի երկու երկրների հարաբերությունների վրա: Վկայակոչելով «Ռուսաստանի նախագահի աշխատակազմի աղբյուրները», կիոդո Ցուսին գործակալությունը հաղորդում է, որ այցի նոր հետաձգման պատճառը, ինչպես եւ անցյալ տարվա սեպտեմբերին, եղել են կողմերի տարբեր դիրքորոշումները, քանի որ Տոկիոն ձգտում է որեւէ կոնկրետ հիմք ստեղծել տարածքային հարցի լուծման համար, իսկ Մոսկվան կուզենար այդ խնդրի կոնկրետ ճնարկումը փաստորեն թողնել ապագային, նկատի ունենալով ներքին անկայուն իրադրությունը: Հիշեցնելով, որ մայիսի վերջը որպես այցի ժամկետ առաջարկել էր ինքը՝ նախագահ Ելցինը, գործակալությունն այն ենթադրությունն է անում, թե «այցի անսպասելի նոր հետաձգումն էլ ավելի կվատթարացնի ճապոնիայում Ռուսաստանի հանդեպ առկա վերաբերմունքը»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

ԱՄՆ-ը դուրս է մղում Ռուսաստանին

Մայիսի 5-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսում Ռուսաստանի կառավարության փոխվարչապետ Ալեքսանդր Շոխինը հաղորդեց, որ ԿՄՆ-ի դիրքորոշման հետեւանքով տաղաղման վտանգի տակ է Մալայզիային Միգ-29 կործանիչներ վաճառելու մասին նախատեսվող գործարքը: Ա. Շոխինի խոսքերով, ամերիկյան կողմը հերքել է դեմպինգի մեղադրանքները, սակայն Ռուսաստանի կառավարությունն ամենամոտ ժամանակներս կներկայացնի բոլոր փաստերը եւ տեղեկությունները, որոնք հաստատում են, որ այդ հարցում ԱՄՆ-ը դիմում է դեմպինգի: ՆՏ

Վրաստանի երկաթգծերը վթարային վիճակում

Ինչպես մայիսի 5-ին հաղորդեց Վրաստանի երկաթուղային տրանսպորտի դեպարտամենտի գլխավոր ինժեներ Իգոր Մելկածեն, հաճախակի է դարձել երկաթուղային սարքավորումների եւ պղինձ պարունակող կապի կաբելների թալանը: Գլխավոր ինժեների տվյալներով, 4,7 հազար դրոսել-տրանսֆորմատորներից մնացել է միայն 2,2 հազար: Վերականգնման ենթակա չեն ավելի քան 100 էլեկտրաքարշեր եւ 50 շոգեքարշեր: Վերջին կես տարվա ընթացքում կտրել եւ թալանել են 160 կմ հեռախոսային կաբել, 53 կմ կոնտակտային լար, կորոշվել են ավելի քան 40 տոննա պղինձ պարունակող սարքավորումներ եւ մեքենաներ: Գործնականում չի գործում ավտոուղեկցման համակարգը, որը կարգավորում է երկաթուղային հաստվածների բողունակությունը, կոտրված միջուղիների ռելեների պահարանները: Ի. Մելկածեի խոսքերով, գնացքները շարժվում են գրեթե կուրորեն, որի հետեւանքով միայն ապրիլին տեղի ունեցավ մարդատար գնացքների բախման երկու դեպք: ՆՏ

Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Գլխաւոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841
Տնօրէն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
Apple* Macintosh* համակարգչային շաբաթաթերթ «Ազգ» թերթի
Azg armenian daily
Editor H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
Թերթի ձեւավորումն եւ տարատեսակների հեղինակ ՊԱՎԵԼ ՂԱԼԼԱԲՅԱՆ

ENTERPRISE Mercury

"Mercury enterprise"-ը

հերթական անգամ անցկացնելով ինվեստիցիոն գործընթացը, բնակչությանը հնարավորություն է ընձեռում իրենց խնայողությունները պահպանել հիպերինֆլյացիոն պրոցեսներից: Ֆիրմայի մասնագետներն այս անգամ առաջարկում են ներդրումների *հետեւյալ տարբերակները.*

1. Եռամսյա ավանդների դեպքում -15% ամսական, որը ժամկետի վերջում կկազմի -45%
2. Վեցամսյա ավանդների դեպքում -20% ամսական, որը ժամկետի վերջում կկազմի -120%

"Mercury enterprise"-ը

Երաշխավորում է ձեր գումարների ապահովվածությունը արժեզրկման պայմաններում ամենակայուն ապրանքի հանդիսացող անշարժ գույքով:

Երեւան, Սայաթ-Նովայի 19, «ԱՆԻ» հյուրանոց, 6-րդ հարկ 632 եւ 634 սենյակներ ☎ 594-632, 594-634

PUBLISET

KILIKIA T.T.S.

«Կիլիկիա S.S.U.» ընկերությունը բնակչությունից ընդունում է կարճաժամկետ եւ երկարաժամկետ վարկեր: Ի տարբերություն մյուս բանկերի, ընկերությունը կատարում է նաեւ

ՏՈԿՈՍԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

1. Ամենամսյա վճարումների դեպքում
   17 տոկոս 3 ամսյա պայմանագրի դեպքում
   20 տոկոս 6 ամսյա պայմանագրի դեպքում
   24 տոկոս 1 տարվա պայմանագրի դեպքում:
2. Եռամսյա վճարումների դեպքում
   60 տոկոս 3 ամսյա պայմանագրի դեպքում
   145 տոկոս 6 ամսյա պայմանագրի դեպքում
   320 տոկոս 1 տարվա պայմանագրի դեպքում

Գյումրի, Վանաձոր, Կամո շրջաններում կբացվեն մասնաճյուղեր, տեղեկությունները շրջանային թերթերում:

ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ ՉԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎՈՒՄ:

Սայաթ-Նովայի պող. «Անի» հյուրանոց, 7-րդ հարկ, 730, 736 սենյակ
Աշխատանքային ժամերը 11⁰⁰-18⁰⁰
Հեռ. 58-11-10, 59-43-70

PUBLISET

ՀՅ Նախագահների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան 23 Արշակունյաց 24 Գրանցման թիւ 65. Դասիչ 69149. Տպաքանակ 36 000. Պատուեր 1504 Ստորագրուած է տպագրութեան 6.5.1993

digitised by A.R.A.R.@